# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ 11 (1461) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 03, 2010
VOLUME 30, NO. 11 (1461) SATURDAY, APRIL 03, 2010

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### ԶՈՒԳԱՀԵՌ ՄԸ ԱՀՄԷՏ ԱԼՔԱՆԻ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏ ՌԵՋԷՓ ԹԱՅԻՊ ԷՐՏՈՂԱՆԻ ՄԻՋԵՒ

***ՏՕՔԹ.Ա.ԳԱԶԱՆՃԵԱՆ***

«Մեր Անկիւնէնի» մէջ, մեր նախորդ համարով, առաջին հերթին լուսարձակի տակ առած էինք թուրքականաւոր դէմքերէն՝ հանրածանօթ մտաւորական Ահմէտ Ալթանը: Ահմէտ Ալթան թրքատառ «Թարաֆ» թերթի 11 Մարտ 2010 թուակիրին մէջ գրած յօդուածին մէջ տեղատարափ հարցադրումներու նշաւակ կը դարձնէր ներկայ թուրք իշխանութիւններու ստաբարոյ եւ նուաստացուցիչ (ածականը իրն է) ազգային քաղաքականութիւնը: Ահմէտ Ալթան կը դատապարտէր թուականէս 95 տարիներ առաջ Իթթիհատ կազմակերպութեան իրագործած Ցեղասպանութիւնը հայ ժողովուրդի դէմ: Կը պատգամէր թուրք պետական շրջանակներուն վերջ սահմանել սուտի քաղաքականութեան՝ 70 միլիոն հաշուող թուրք ժողովուրդին եւ համայն մարդկութեան առջեւ: Ճանչնալ եւ դատապարտել հայ ժողովուրդի դէմ Իթթիհատի գործած Ցեղասպանութիւնը, տէր ու պաշտպան չկանգնիլ անոր՝ կարենալ դուրս գալու համար ուրացողի նուաստացուցիչ իրավիճակէն՝ յաչս մի-

*Շար.ը էջ 17*

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԸ ՄԵՐԺԱԾ Է ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՈՒ ՈՐՈՇ ԿԷՏԵՐԸ



*Մինսկի Խումբի ներկայացուցիչները արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեանի հետ հանդիպումի ընթացքին*

*ԵԱՀԿ Մինսկի խումբի ռուսաստանցի համանախագահ Եուրի Մերզլեակով Մարտ 29-ին Ղարաբաղի իշխանութիւններու հետ միջնորդներու ունեցած հանդիպումէն ետք յայտարարեց, որ քննարկումը բովանդակալից էր:*

*Եուրի Մերզլեակով ըսաւ, որ ընթացքի մէջ է տարուայ վերջերուն համանախագահներու կողմէ ներկայացուած առաջարկութիւններու համաձայնեցման գործընթացը:*

*Ըստ Մերզլեակովի, հայկական կողմը արդէն իր անհամաձայնութիւնը յայտնած է որոշ կէտերու վերաբերեալ: «Բայց մենք չենք բարդացներ իրավիճակը, քանի որ ուղիղ երկու տարի առաջ նոյն իրավիճակն էր Մատրիտեան սկզբունքներու շուրջ, երբ հայկական կողմը կ'ընդունէր, բայց, ինչպէս հիմա կը պարզուի՝ ոչ ամբողջապէս, իսկ ատրպէյճանական կողմը չէր ընդուներ, եւ մենք երկար աշխատեցանք, որպէսզի գանք ընդհանուր յայտարարի», - աւելցուց Մերզլեակով:*

*Ռուսաստանցի համանախագահը փոխանցեց նաեւ, որ ընդհանուր առմամբ կողմերը համաձայնութեան եկած են Մատրիտեան սկզբունքներու շուրջ՝ բացի 4 կէտերէ:*

*Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան ընդունեց տարածաշրջան այցելող ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներ՝ Ռուսաստանցի Եուրի Մերզլեակովին, Ֆրանսացի Պեռնար Ֆասիէին, եւ Ամերիկացի Ռոբերդ Պրատկէին եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջէյ Քասպրչիկին:*

*Հանդիպման ընթացքին քննարկուեցան արցախեան հարցի կարգաւորման բանակցութիւններու վերջին զարգացումները եւ մատրիտեան առաջարկութիւններու հիման վրայ կողմերու մօտեցումները:*

*Անդրադառնալով վերջին շրջանին մատրիտեան առաջարկութիւններու հետ կապուած շահարկումներուն՝ Հայաստանի արտաքին գործոց նախարարը ըսաւ. «Մատրիտեան սկզբունքները Հայաստանի կողմից ընդունուել են որպէս բանակցութիւնների հիմք դեռ երկու տարի առաջ եւ շարունակում են մնալ այդպիսին»:*

*Ֆրանսացի համանախագահ Պեռնար Ֆասիէ իր կարգին ընդգծեց, որ Մատրիտեան սկզբունքներու շուրջ բանակցութիւնները տակաւին կը շարունակուին, եւ այն, որ կողմերը ժամանակ առ ժամանակ համաձայնութեան կու գան այդ սկզբունքներու շուրջ, Ֆասիէի կարծիքով, լուրջ է, եւ ուրեմն, գոյութիւն ունին փոխըմբռնման եզրեր:*

*Մինսկի խումբի համանախագահները Երեւանի մէջ հանդիպում ունեցան նաեւ Սերժ Սարգսեանի հետ:*

## ԿՈՉ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻՒ 2




Թուրքիոյ կողմէ 95 տարի առաջ տմարդօրէն ծրագրուած, կազմակերպուած եւ գործադրուած առաջին Ցեղասպանութիւնը տակաւին կը մնայ անպատիժ: Հայութիւնը որեւէ ատենէ աւելի այսօր եւս կը մնայ տէրը իր իրաւունքներուն:

Վերջին ամիսներուն, քաղաքական իրադարձութիւնները, յատկապէս ինչ կը վերաբերի Հայաստան-Թուրքիա սահմանի բացումին եւ փրոթոքոլներուն, ուրիշ բան չեն, եթէ ոչ Թուրքիոյ կողմէ կատարուած փորձ մը, նսեմացնելու համար իսկական տարողութիւնը մեր Ցեղասպանութեան:

Արդարեւ, հայ ժողովուրդը այս օրերուն մեծ եւ դժուարին մարտահրաւէրներու առջեւ կը գտնուի: Հայ-Թրքական յարաբերութեանց կարգաւորման եւ Արցախի հիմնահարցի լուծման համար, մեր ժողովուրդը ծանր ճնշումներու ենթարկուած է:

Մեր ժողովուրդը, յատկապէս այս օրերուն, անգամ մը եւս մէկ մարդու նման իր ձայնը պիտի բարձրացնէ եւ համայն աշխարհին պիտի յիշեցնէ, թէ Թուրքիան պարտաւոր է հողային եւ նիւթական հատուցում կատարելու իրեն: Հայ ժողովուրդը երբեք պիտի չդադրի պայքարելէ իր իրաւունքներու համար:

Այսու, կոչ կ'ուղղենք Հարաւային Գալիֆորնիոյ հայութեան, որ այս պայքարի ծիրէն ներս իր բողոքի ձայնը բարձրացնելու համար Շաբաթ, Ապրիլ 24, կէսօրէ ետք ժամը 1:30ին խուռներամ ներկայ գտնուի Մոնթեպելլոյի Հայ Նահատակաց Յուշարձանին վայրը: Հոն, մեր գաղութի բոլոր յարանուանութեանց պետերուն եւ կղերականներուն մասնակցութեամբ տեղի պիտի ունենայ քաղաքական հաւաք, որմէ ետք պիտի կատարուի հաւաքական հոգեհանգստեան պաշտօն:

Քաղաքական հաւաքին ելոյթ պիտի ունենան գաղութի ներկայա-

*Շար.ը էջ 5*

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԿՈՉ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

*Մարդու Իրաւունքներու Միջազգային Համադաշնակցութեան (FIDH) նախագահ Սուհէր Պելասէն հանդէս եկած է յատուկ ուղերձով, ուր կոչ կ'ընէ Հայաստանի իշխանութիւններուն՝ ազատ արձակել քաղաքական բանտարկեալները եւ 2008 Թուականի Մարտի 1-2-ին տասը քաղաքացիներու սպանութեան առնչութեամբ իրականացնել արժանահաւատ ու արդիւնաւէտ քննութիւն, ինչ որ պիտի նշանակէ, որ Հայաստանը կ'երթայ դէպի օրէնքի գերակայութիւն:*

*Ուղերձին մէջ նաեւ արձանագրուած է, որ Հայաստանի մէջ մարդու իրաւունքներու հետ կապուած կան խնդիրներ, իսկ արդարադատութեան ոլորտէն ներս ալ առկայ են լուրջ խնդիրներ, որոնք էապէս կը խոչընդոտեն Հայաստանի մէջ օրէնքի գերակայութիւնը:*

*Սուհէր Պելասէնի ուղերձը հրապարակուած է Ապրիլի 6-8-ը Երեւանի մէջ կայանալիք FIDH-ի 37-րդ Գոնկրէսին եւ ֆորումին ընդառաջ: Ուղերձին մէջ Պելասէն յոյս կը յայտնէ, որ «ֆորումը կը մեկնարկէ Հայաստանի մէջ, ուր այլեւս քաղաքական բանտարկեալներ»:*

*Հայաստանեան իրաւապաշտպան շարք մը հեղինակաւոր կառոյցներ չեն մասնակցիր եւ կամ կը սպառնան չմասնակցել այս միջոցառումին:*

*«Ես ընդհանրապէս հրաւէր չեմ ստացել», - «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է Հելսինքեան Ասոսիացիայի նախագահ Միքայէլ Դանիէլեան: - «Ես համարում եմ, որ կան իրաւապաշտպաններ եւ ոչ-իրաւապաշտպաններ: Այն*

*Շար.ը էջ 4*

## ՇՆՈՐՀԱՒՈՐ Ս. ԶԱՏԻԿ

Ս. Յարութեան յաղթական տօնին առիթով, «Մասիս» շաբաթաթերթը ջերմօրէն կը շնորհաւորէ իր ընթերցողներուն եւ համայն հայութեան Ս. Զատիկը:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՎ ՊԱՏԿԵՐԸ ՁԵՐ

***ԴԱՒԻԹ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ***
***«ԻՐԱՒՈՒՆՔ ՏԷ ՖԱՔՏՕ»***

*Աւագ շաբաթն ու Սերժ Սարգսեանի պաշտօնավարման երկու տարուայ բոլորումը «մոլորել» են (երկրորդ նախագահի տերմինոլոգիան է, իմա՝ մոլորեցրել են) Քոչարեանին:*

*2008-ին գնալուց առաջ Քոչարեանը մտածում էր՝ Սերժը չի ձգի: Ու անյապաղ իր կարիքը կ՚զգայ:*

*Չինգիզխանը (Յիշո՞ւմ էք) «գնալուց» առաջ ապսպրեց՝ փակել աղբիւրների բերանը, որ կեանքը կանգնի:*

*Ձգեց Սերժ Սարգսեանը: Երկու տարի: Ու դեռ կը ձգի: Լի՛քը:*

*Ակնյայտ է՝ իր պէս միայնակ Թոշակառու Օսկանեանով, յետոյ էլ Թոթովախօս մամլոյ խօսնակի երկարաշունչ «ձեռամբ» պատասխանելով Ֆասիէին ու Լենմարկերին (թէ ինչու ինքը սկսեց բանակցել նաեւ Ղարաբաղի փոխարէն՝ խաղից հանելով ոչ միայն իր ճամփին պատահած իւրաքանչիւրին ու ամէն ինչ՝ սկսած Ղարաբաղից, հասնելով ՀՀ նախագահներին, վարչապետներին), միեւնոյն է՝ ղարաբաղեան հարցի լուծումը Քոչարեանը չի մօտեցնելու, որպէսզի 98-ի «դեժավիւն» կրկնի ու դառնայ «չերիտասարդ Թոշակառու»:*

*Նա ստիպուած է համբերել: Ճիշդ է, Սերժ Սարգսեանն ունի «գրիչ» ու կարող է ցանկացած պահի ցանկացած հրամանագիր ստորագրել, բայց ո՛չ երբեք՝ Քոչարեանի վարչապետացման:*

*Համ էլ՝ Սերժ Սարգսեանը Քոչարեանի համեմատ ունի ահաւոր մեծ մի առաւելութիւն. կարողանում է համբերել (օրինակ, նա համբերեց, որ Քոչարեանն աւարտի «սրոկը»... չէ՞ք ամաչում, ո՞վ տուեց Հաագայի անունը, նկատի ունենք նախագահական երկու ժամկէտները):*

*Իսկ Քոչարեանը ոչ միայն համբերութիւն չունի, այլեւ ռեսուրս, ահա եւ խօսեց «Զրադաշտը»՝ Վիկտոր Սողոմոնեանը, ու էլ մարդ չկայ, որ ասի, թէ Քոչարեանը, ի վերջոյ, ինչ է ուզում, երբ է ուզում, «ումով» է այդքան ահաւոր շատ ուզում: Կամ էլ պիտի «մի Թայլա» էլ պտտուեն. առջեւում կրկին ԱԺ քառօրեան է: Բայց ոնց տեսնում էք՝ Գագիկ Ծառուկեանը գնացել է Դուբայ, հաւես չունէր այդ խաղի մէջ կրկին ներսուզուելու, Յովհաննէս Արզամիչն էլ իրեն տուել է Թատրոնին (մե՛ղք է Թատրոնը)՝ դպրոցն ու մանկահասակ երեխաների կրթական «ցենզը» մի կողմ Թողած:*

*Ու, փաստօրէն, Քոչարեանը տեսնում է՝ «դեպոն» ոչ մի կերպ չի կանգնում, ու «նեարդում» է: Եւ այնուհանդերձ, ինչե՞ր արեց, որ «դեպոն» կանգնի յատկապէս 2008-ին: Նախ՝ 2005-ին Սահմանադրութեամբ վարչապետին այնպիսի լիազօրութիւններ յաւելագրեց, որ ցանկացած նախագահ իրեն «անգլիական Թագուհի» զգայ: Իսկ ահա Սերժը ելաւ ու գնաց Բուքինգհեմեան պալատ՝ Քոչարեանին ցոյց տալու, թէ ով է իրականում անգլիական Թագուհին աշխարհում: Յետոյ էլ Քոչարեանին երբեւէ ո՛չ այդ պալատում, ո՛չ էլ ԱՄՆ-ում չարժանացրին պաշտօնական ընդունելութեան: Ինչեւէ:*

*Քոչարեանը հաշւում էր, որ իր բարեփոխած Սահմանադրութեամբ նոյնիսկ «կարող է պատահի տրումբէն պայթի»՝ ինքը չուզենայ նախագահ դառնալ, մանաւանդ որ, որպէս վարչապետ, «Թագուհի» կ՚ունենար:*

*Չստացուեց:*

*Իսկ թէ 2008-ի Մարտի մէկին նա ինչպէ՞ս կանգնեցրեց «դեպոն», չվերյիշենք, որովհետեւ տասը մատաղաշ տղերքի արեան հոտը դեռ բոլորիս ռունգերում է:*

*Բայց մի բան ասենք. եթէ նկատում էք՝ սցենարն ահազին նոյնն է. Մարտի 1-ի նախօրեակին՝ ժողովուրդ-ոստիկանութիւն արիւնոտ բախումից, յատուկ դրուժինից մի քանի «րոպէ» առաջ, դարձեալ մէջլիս մտաւ Օսկանեանը (եթէ չենք սխալւում՝ երկրում նա պիտի որ արտաքին գործերի նախարարը լինէր այն ժամանակ, բայց դէ՝ Մինասիչը «խառնուեց» ներքին կեանքին, մեսիջներ ղրկեց հարկաւորներին):*

*Բանն այն է, որ դրանով Քոչարեանը փորձում էր հասկացնել Սերժին, որ եթէ ոչ ինքը, ապա վարչապետ պէտք է նշանակուի գոնէ Օսկանեանը: Կար Յովիկ Աբրահամեանի տարբերակը եւս, սակայն քոչարեանենք այնքան էլ դրան հակուած չէին.*

*Այս պահին՝ եւս մէկ դիտարկում, եւ անցնենք երկրորդ նախագահի «ղալամով» քաշած պատկերին՝ ֆաս-անֆաս, հոգեւոր-անհոգի բոլոր դիրքերով:*

*Բանն այն է, որ Քոչարեանը, որի կարծիքով այսօր «դեպոն» ընդամէնն իներցիայով է առաջ շարժւում, պէտք է «մոլորեր» շատ արագ. այնուհանդերձ, շատ կարեւոր մէկ դիլեմայի առջեւ էլ է կանգնել. Հայաստան այցելած եւ ոչ մի պաշտօնեայ, որեւէ միջազգային կառոյցի ներկայացուցիչ չի այցելում նրան: Երբե՛ք:*

*Ի տարբերութիւն Լեւոն Տէր-Պետրոսեանի, որին անցնող տասը տարիների ընթացքում, երբ վերջինս ամենեւին էլ ակտիւ քաղաքականութեան մէջ չէր, այլ «նախկին» էր եւ նստած տանը գիրք էր գրում (ի՞նչ կարեւոր բան է տառաճանաչ լինելը), նրան գրեթէ բոլորն էին այցելում: Չենք ուզում նոյնիսկ յիշել, թէ ինչպէս նոյն երկրորդ նախագահի օրօք նախագահականում խաբեցին Նազարբաեւին, թէ Տէր-Պետրոսեանը Հայաստանում չէ, որ վերջինս նրան չայցելի:*

*Հասանք պատկերագրմանը:*

*Երբ բազում ու բազմաթիւ ինտրիգների միջոցով 98-ին Քոչարեանը տիրացաւ գահին, բոլորը մտածում էին՝ հնարաւոր չէ՝ այդքան անարդարութիւնները նա կարողանայ մարսել, եւ ուր որ է՝ աթոռը նրա տակ երերալու, փշուր-փշուր է լինելու:*

*Աւա՜ղ:*

*Ժամանակն անցնում էր, նրա դիրքերն աւելի էին «ամրակայւում»: Իսկ 98-ի անարդարութիւններն արդէն մանկական «միամտութիւններ» էին թւում այն ամէնի համեմատ, որոնց շղթան արդէն յետոյ սկսուեց:*

*Էս պստիկ, ոչ մի ռեսուրս չունեցող, աշխարհից գրեթէ մոռացուած Հայաստանում Քոչարեանի օրօք շէքսպիրեան պալատներին յատուկ «կրքեր» խաղարկուեցին՝ մի կերպ, մեծ ինտրիգների արդիւնքում ձեռք բերած աթոռիկը պահելու համար:*

*Փորձենք հասկանալ Ղարաբաղից մեզ մօտ եկած Քոչարեանի «ֆենոմենը»: Չլինելով գրագէտ, հայախօս, չտիրապետելով հայ տեսակի տիպաբանութեան գաղտնիքներին, չնոյնացուելով հայ հողի հետ, չիմանալով հայ բնաւորութիւնը, նիստ ու կացը, իւրացրած չլինելով հայ արժէհամակարգը, այսինքն, լինելով անչափ օտար, նա «տնավարի» եկաւ ու երկար «տեւեց», ու «բեզպորդոննո» դեռ ցանկանում է «տեւել»՝ իր սկզբունքի համաձայն՝ «դաւելով»:*

*Աւելին, նա, կարծես, հայոց մէջ նոր տիպաբանութիւն առաջացրեց՝ փորձելով իրեն ենթարկել «ամէնն ու ամէնքին»՝ ընտրելով իր համար ենթագիտակցական այնպիսի տարածք, որտեղ իւրաքանչիւր ոք պարտւում, անէանում-ոչնչանում է տարբեր կերպերով՝ ով ինչպէս «կարող» է: Եւ դա ոչ այն պատճառով, որ Քոչարեան Ռոբերդն անչափ խելացի ու խորհեմ է կամ մագիա ունի եւ անտես ձեւով ներազդում է բոլորի վրայ:*

*Ո՛չ:*

*Պարզապէս նա մեզանում, պալատական համակարգում բոլորովին նոր երեւոյթ է, եւ, ինչքան էլ պարադոքսալ հնչի, Քոչարեանով մեր տեսակն սկսում էր փոխուել:*

*Իսկ նրա տեսակն արտաքին աչքի համար չէ: Հասկանալի է՝ բարձրակարգ կրթութիւն չունի, մաներա՝ նոյնպէս: Ինչը, անկեղծ ասած, ամենեւին էլ պարտադիր չէր եւ կարող էր լրացուել մի շարք այլ կոմպոնենտներով: Ասենք՝ անկեղծութեամբ, հայավարի անմիջականութեամբ, դիմացինի, «բարձրակարգի» գնահատմամբ, իր բացը նրանով լրացնելու կարողականութեամբ:*

*Այո՛, Քոչարեանն արտաքին աչքի համար չէ, որովհետեւ ապրում է լոկ իր համար: Իսկ նման մարդիկ ինչքան էլ հասկանալի են (գիտենք, որ ընդունակ են քինախնդրութեան, վրիժառութեան, մինչեւ վերջին շունչը եսակենտրոնութիւնը պահելու, ուրիշի «դիակի» վրայով անցնելու եւ այդպէս շարունակ), սակայն միշտապէս «մութ» են, անըմբռնելի:*

*Արեւելեան իմաստութիւնն ասում է՝ որոնիր ոչ թէ փաստը, այլ պատճառը:*

*Ի դէպ, նոյն արեւելքներում, ասենք, «եոգայի» (քրիստոնէութեան կողմից մերժելի) ուսմունքը կառուցւում է հետեւեալի վրայ. եոգը տարբեր վարժութիւնների միջոցով ողնաշարի ծայրում՝ «կապոյտ Թանաքամանի» մէջ նստած օձին արթնացնում, ողնաշարով՝ «չակրաներով» (էներգետիկ կենտրոններով) բարձրացնում-հանում է վեր: Մեծ պահքի Աւագ շաբաթուայ մէջ դաւանաբանական սխալ թոյլ չտալու համար (ի դէպ, Քոչարեանը լաւ չգիտի նաեւ Հայ Առաքելական եկեղեցու եւ աղանդների տարբերութիւնը) նշենք, որ քրիստոնէութիւնն ուղիղ սրա հակառակն է՝ Սուրբ հոգին վերից՝ գլխից ներհոսում է դէպի մարդու սիրտն ու վերջնականապէս հանգրուանում այնտեղ, գի սրտի մէջ է հոգու «գաղտնիքը». եթէ սիրտը բաց է, մարդը հոգեպէս կենդանի է, եթէ ոչ, մարդն այլ տէրերի է ծառայում: Այսպէս է աւանդում քրիստոնէութիւնը, իմա՝ Հայ Առաքելական եկեղեցին:*

*Այսպիսով, եոգը օձին հանում է վեր՝ հասցնում է սրտին ու այլեւս տեղ չունի նրան տանելու, քանզի «վերեւում» գլխի-«սախասրարա»՝ Աստծոյ տան «չակրան» է, որը նրա համար անձեռնմխելի է: Ու հենց այստեղ էլ եոգիզմը պարտւում է...*

*Ինչո՞ւ ենք այսքան երկարաբարակ «խորանում» այս ամէնի մէջ. ընդամէնը ասելու, որ եթէ ոչ տեսական, ապա հաստատապէս գեղագիտական առումով կարող ենք համադրել ու ասել, որ Քոչարեանի՝ մեր հանրութեան, քաղաքական, գիտական, մտաւորական-հոգեւոր ոլորտի համար կատարածը հետեւեալն է. նրան յաջողուել է ոչ միայն իր, այլեւ հայ հանրութեան ողնաշարում քնած օձին արթնացնել, «բարձրացնել», հասցնել ոչ միայն իր շրջակայքի, այլեւ ողջ հանրութեան սիրտը: Աւելին՝ ոչ միայն սիրտը, այլեւ (թոյլ տուէք ասել) գլուխը, ինչը եզակի բան է մեր տեսակաբանութեան համար, որովհետեւ հայ տեսակը նախ եւ առաջ հոգեւոր-քրիստոնեայ տեսակ է եւ ունի պատմական առաքելութիւն՝ տեսակը չփոխելու (թող բարձր չհնչի), հոգեւոր արժէքներին հաւատարիմ մնալու, օձին մասամբ տեղի տալու, բայց ոչ երբեք մինչեւ վերջ նրա հետ համերաշխուելու: Այն էլ՝ գլխի մակարդակում:*

*Ամենեւին հակուած չենք պնդումին, թէ Քոչարեանին յաջողուելու է փոխել մեր տեսակը: Դա անհնարին է: Բայց նա հայ տեսակին մօտեցնելու է մի սահմանագծի, որտեղ հայը պէտք է ընտրութիւն կատարի՝ ինքը համերաշխւում է օձի՞, թէ՞ իր իրական բնոյթի հետ:*

*Սա է Քոչարեանի «հոգեւոր առաքելութիւնը» մեզանում, որը հաստատապէս ո՛չ ինքն է հասկանում, ո՛չ իր միջավայրը, սակայն պրոցէսն ընթանում է՝ անկախ նրանց կամքը հաշուի առնելու (ահա մի տեղ, ուր նա չի կարող միակ տղամարդը լինել, որովհետեւ խելքը չի հասնում եւ պարզապէս իրականացնում է վերից իրեն թելադրուած ծրագիրը, եւ կարելի է ասել՝ շատ բարեյաջող): Քոչարեանով եռում է մեր ընդերքը, թերմացքը դուրս է գալիս ջրի երես, ինչն էլ հոգեւոր իմաստով հրաշալի պրոցէս է. կ՚եռայ-կը թափուի, տակը մնացածից տեսակ ու որակ կը գոյանայ:*

*Եթէ ոչ, դրա՞ն էինք արժանի:*

*Սա՝ հոգեւոր-անտեսանելի ֆասանֆասը:*

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
**Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ՀԱՅԱՍՏԱՆ

### «ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ» ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՆ ՈՒ ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԻԱՒՈՐՈՒԵԼ

*«Ժառանգութիւն» կուսակցութիւնը կոչ է անում Հայաստանի հանրապետական, «Բարգաւաճ Հայաստան», «Օրինաց երկիր», Հայ Յեղափոխական դաշնակցութիւն կուսակցութիւններին եւ Հայ ազգային գոնկրէսին՝ ձեւաւորել նոր, քաղաքական ոչ-ֆորմալ կենտրոն Կլոր սեղանի ձեւաչափով՝ Արցախի եւ հայ-թուրքական խնդիրներում ահագնացող արտաքին ճնշումներին, այդ թւում՝ Ադրբեջանի կողմից նոր պատերազմի սանձազերծմանն ի պատասխան:*

*Մարտ 30-ին տարածած յայտարարութիւնում «Ժառանգութիւնը» նշում է, որ բովանդակ հայ ժողովրդի հետ մէկտեղ խիստ անհանգստացած լինելով հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման եւ արցախեան խնդիրների շուրջ տեղի ունեցող վտանգաւոր զարգացումների եւ առկայ սպառնալիքների առնչութեամբ, կուսակցութիւնը ստեղծուած իրավիճակը գնահատում է որպէս Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւններին ուղղուած ամենավտանգաւոր մարտահրաւէրը, որը երբեւէ եղել է 1993-ից ի վեր:*

*«Այս պայմաններում Արցախի եւ հայ-թուրքական խնդիրներում ահագնացող արտաքին ճնշումներին, այդ թւում՝ Ադրբեջանի կողմից նոր պատերազմի սանձազերծմանն ի պատասխան՝ «Ժառանգութիւնը» կոչ է անում ընդդիմադիր ՀԱԿ-ին ու ՀՅԴ-ին եւ կոալիցիոն կուսակցութիւններին՝ ՀՀԿ-ին, ԲՀԿ-ին եւ ՕԵԿ-ին, մինչեւ ԱԺ արտահերթ կամ հերթական ընտրութիւնները, գործող խորհրդարանի քաղաքական ցածր արդիւնաւէտութեան պայմաններում ձեւաւորել նոր, քաղաքական ոչ-ֆորմալ կենտրոն՝ Կլոր սեղանի ձեւաչափով, որում կ՚ընդգրկուեն նշեալ 3 ընդդիմադիր եւ 3 կոալիցիոն ուժերը, ինչի շնորհիւ համամասնօրէն ներկայացուած կը լինեն ընդդիմութիւնն ու իշխանութիւնը: Կլոր սեղանը առաջարկում ենք ձեւաւորել առանց նախնական օրակարգի, ապա սեղանին դնել ընդդիմադիր ու իշխանական ուժերին յուզող բոլոր հիմնական խնդիրները եւ առանց նախապայմանների գալ ընդհանուր յայտարարի մի շարք հարցերում: Սա կարող է անհրաժեշտ նախադրեալներ ստեղծել պատերազմական գործողութիւնների վերսկսման դէպքում ներհասարակական-ներքաղաքական միասնութեան ապահովման եւ համախմբուած ուժերով հակառակորդին դիմակայելու համար, ինչպէս եւ՝ խթանել ժողովրդավարական բարեփոխումները»,- ասւում է կուսակցութեան յայտարարութիւնում:*

### ՀՐԱՆԴ ԲԱԳՐԱՏԵԱՆԸ ՀԱԿԱԴԱՐՁՈՒՄ Է ՌՈԲԵՐԴ ՔՈՉԱՐԵԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Շինարարութեան վերաբերեալ Ռոբերդ Քոչարեանի յայտարարութիւնները իրականութեանը չեն համապատասխանում, յայտարարեց նախկին վարչապետ Հրանդ Բագրատեանը:*

*«Այն, որ իր ժամանակ շինարարութիւնը դարձել է մեծ շարժիչ ուժ, մենք չենք տեսնում; Այդ շինարարութիւնը, նոյնիսկ լաւագոյն տարիներին, եղել է ընդամէնը 30-40 տոկոս աւել, քան թէ ամենածանր, մութ, ցուրտ տարին: Ֆիզիկական ծաւալները շինարարութեան վիճակագրութեամբ աւելացել են 8 անգամ, չգիտես ինչու», - ընդգծեց նախկին վարչապետը՝ մանրամասնելով. - «Այն ժամանակ մենք նոյն քառակուսի մետրը կառուցել ենք 50 միլիարդ դրամով, իրենք կառուցել են 820 միլիարդով: Մենք կառուցել ենք սոցիալական բնակարանային ֆոնդ ժողովրդի համար, ինքը կառուցել է իր համար՝ որ վաճառի: Եւ ինքն էլ թաղուեց այդ բիզնեսի մէջ՝ արդէն ոչ թէ որպէս նախագահ, այլ կառուցապատող»:*

*Ռոբերդ Քոչարեանի օրօք շինարարութիւնը տեղափոխուեց մայրաքաղաքի կենտրոն, դարձաւ առաւելապէս էլիտար, նշեց Հրանդ Բագրատեանը:*

*«Իրեն ես կոնկրետ՝ ոչ թէ մենք, մեղադրում եմ այդ մարդուն, եւ ոչ միայն այդ մարդուն՝ կառավարութեանը, նոյնիսկ միջազգային ֆինանսական կառոյցներին՝ դուք ո՞նց էիք թոյլ տալիս քաղաքի կենտրոնում 3 միլիարդ դոլարի էլիտար շինարարութիւն, որի պահանջարկը չկար: Այդ 3 միլիարդը սառեցուել է շինարարութեան մէջ, որը այսօր իրացում չի գտնում, եւ այդ 3 միլիարդը չի ծառայում հանրապետութեան զարգացմանը», - յայտարարեց նախկին վարչապետը:*

*«Մեդիամաքս» լրատուական գործակալութեանը տուած հարցազրոյցում Ռոբերդ Քոչարեանը նաեւ համոզմունք էր յայտնել, թէ կարելի էր խուսափել շինարարութեան ոլորտում արձանագրուած անկումից, եւ առաջարկել էր հետեւեալ բանաձեւը. - «Անհրաժեշտ է համախմբել ջանքերը բնակարանային պահանջարկի պահպանման համար»:*

### ՍԱՄՈՒԷԼ ԲԱԲԱԵԱՆ. «ՔՈՉԱՐԵԱՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ՄԵՂԱԴՐԵԼ ԵՆ ԻՐԵՆ»

*«Haynews.am»: ԼՂՀ պաշտպանութեան նախկին նախարար Սամուէլ Բաբաեանը Մարտ 30-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ, անդրադառնալով Ռոբերդ Քոչարեանի հարցազրոյցին, ասել է. «Քոչարեանի յայտարարութիւնը՝ դա ուղղակի Հանրապետականներին ուղղուած ոչ ճիշդ պատասխանն էր՝ Օսկանեանի յայտարարութիւններից յետոյ Քոչարեանին քննադատելու համար»: Ինչպէս նշել է Ս. Բաբաեանը՝ այն ժամանակ, երբ Օսկանեանը արտայայտում էր իր մտքերը, բոլոր լրատուամիջոցները ձեւակերպում էին, թէ Օսկանեանը Քոչարեանի թելադրանքով է արտայայտւում:*

*Ըստ Ս. Բաբաեանի՝ չի կարելի կապել Օսկանեանի ու Քոչարեանի յայտարարութիւններն ու ասել, թէ մէկը միւսին պաշտպանում է. «Քոչարեանը պատասխանել է նրանց, ովքեր արտայայտուել են իր մասին եւ անթաքոյց մեղադրել իրեն»:*

### ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏԵԱՆ. «ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄՈՒՏՔԸ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ ԽԻՍՏ ԲԱՑԱՍԱԿԱՆ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ»



*ՍԴՀԿ մամլոյ խօսնակ Նարեկ Գալստեան*

*«Haynews.am»: Մարտ 29-ին արտաքին քաղաքական զարգացումների ու դրանց հետեւանքների վերաբերեալ բանավէճի ընթացքում, որին մասնակցում էին ՀՀԿ ներկայացուցիչ Մենուա Յարութիւնեանը եւ ՍԴՀԿ մամլոյ խօսնակ Նարեկ Գալստեանը, վերջինս, խօսելով հայ-թուրքական յարաբերութիւնների ու ղարաբաղեան խնդրի կարգաւորման գործընթացների մասին, ասաց. «Վերջին շրջանում այս երկու գործընթացները, մասնաւորապէս հայ- թուրքականը, վերցրին ողջ քաղաքական սպեկտրը: Մենք բազմիցս զգուշացրել էինք, որ Թուրքիայի հետ նմանատիպ յարաբերութիւններ ծաւալելուց առաջ պէտք է շատ երկար մտածել, ոչ թէ հապճեպ գնալ գործընթացների, որոնց արդիւնքում Հայաստանը կորցրեց, իսկ Թուրքիան շահեց հսկայական տիւիտենդներ»:*

*Ինչ վերաբերում է այդ ամէնի հետեւանքներին, ապա ըստ Ն. Գալստեանի՝ այսօր հայաստանեան քաղաքական դաշտի խաղացողների մեծ մասը, (խօսքը թէ՛ իշխանութեան, թէ՛ ընդդիմութեան մի մասի մասին է՝ ՀԱԿ-ի մասնակցութեամբ), համամիտ են միմեանց հետ թէ՛ ղարաբաղեան, թէ՛ հայ-թուրքական հարցերով.« Սա ինձ համար խիստ ցաւալի է, քանի որ այսօր Հայաստանում իսկապէս կայ հզօր ընդդիմութեան անհրաժեշտութիւն, որը կը կարողանայ այս գործընթացներին դէմ կանգնել»:*

*Նա նշեց. «Հայաստանն իսկապէս ունի լրջագոյն ժողովրդավարութեան ներքին խնդիրներ, որոնք օրհասական են, սակայն հայ-թուրքական գործընթացը եւ Արցախի հարցը մեծ հաշուով մեզ կանգնեցրել են, չէի ցանկանայ խտացնել գոյները, բայց լինել-չլինելու հարցի առջեւ, որովհետեւ Թուրքիայի մուտքը Հարաւային Կովկաս եւ դրան հետեւող բոլոր գործընթացները, ինչպէս նաեւ ղարաբաղեան հակամարտութեան ներկայիս զարգացումներն ընթանում են ոչ ի նպաստ Հայաստանի, չեմ կարծում, որ տալու է դրական արդիւնք»:*

*«Ի վերջոյ Հայաստանում ընդդիմութիւն՝ որպէս այդպիսին գոյութիւն ունի՞, թէ՞ ոչ» հարցին ՍԴՀԿ մամուլի խօսնակ Նարեկ Գալստեանը պատասխանել է. «Ինչի՞ մասին է խօսքը, ընդդիմութիւն իհարկէ գոյութիւն ունի: Դաշնակցութիւնը որոշակի քաղաքական գործընթացներում է իրեն ցոյց տուել որպէս ընդդիմութիւն, որոշ կարեւոր գործընթացներում էլ՝ լռել: Հայ-թուրքական կամ ղարաբաղեան գործընթացների առումով դաշնակցութիւնը՝ որպէս ընդդիմութիւն իրեն ցոյց է տուել, իսկ երկրում ներքին ժողովրդավարութեան խնդիրների առումով մինչ այսօր դաշնակցութեան կողմից չեմ տեսել գործողութիւններ կամ ելոյթներ, որոնցով կարելի լինէր ասել, թէ դաշնակցութիւնը գործող իշխանութիւնների հետ համաձայն չէ»:*

*Մնացած ընդդիմադիր ուժերին վերաբերեալ Ն. Գալստեանն ասաց. «Ինձ համար, այս առումով, ամէն բան իրար է խառնուել: Փաստօրէն Հայաստանի քաղաքական կուսակցութիւնների մեծամասնութիւնը բաժանուել է ընդդիմադիր խմբերի՝ միայն այս կամ այն հարցի շուրջ: Օրինակ՝ ժողովրդավարութեան, քաղբանտարկեալների եւ շատ այլ հարցերի առումով Հայ ազգային գոնկրեսը որպէս ընդդիմութիւն իրեն յստակ դրսեւորել է: Սակայն երբ հարցը վերաբերում է հայ-թուրքական կամ ղարաբաղեան գործընթացներին, որտեղ ընդդիմութիւնը պարտաւոր էր դերակատարութիւն ունենալ, Ազգային կոնգրեսը միայն վերլուծական ելոյթներով է հանդէս գալիս»:*

*ՍԴՀԿ ներկայացուցիչը վերջում նշեց. «Ինչ վերաբերում է Հնչակեան կուսակցութեանը, ապա որպէս այդ կուսակցութեան անդամ՝ յստակ ասում եմ, որ այն ընդդիմութիւն է»:*

### ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԱՆԱՄՕԹԱԲԱՐ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԿՈԾԿԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԷՏՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ

*Հայ Ազգային Գոնկրէսի պետաիրաւական յանձնաժողովը յայտարարութիւն է տարածել, որում մասնաւորապէս ասւում է.*

*«ՀՀ արդարադատութեան նախարարութիւնը եւ վճռաբեկ դատարանը առարկութիւններ են ներկայացրել ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատութիւնների եւ մարդու իրաւունքների գրասենեակի մարտիմէկեան գործերով վերջերս հրապարակած զեկոյցին, որում մօտ 100 քրէական գործերի ընթացքի մանրամասն դիտարկման ու գնահատման արդիւնքում, թէեւ զգալի ուշացումով, անձի ազատութեան իրաւունքի, անմեղութեան կանխավարկածի, կողմերի հաւասարութեան սկզբունքի, միայն ոստիկանական ցուցմունքներով, ինչպէս նաեւ խոշտանգումներով ու ահաբեկումներով ձեռք բերուած ապացոյցներով անձանց դատապարտելու մի քանի տասնեակ կոպտագոյն խախտումներ ու փաստեր են արձանագրուել:*

*«Իշխանութիւնը բռնութեամբ զաւթած վարչախմբին չի յաջողուելու կոծկել ու թաքցնել իր գործած յանցանքները: Մարտի 1-ի դէպքերի իւրաքանչիւր բացայայտում ու արձագանք մօտեցնում է վարչախմբի պարագլուխների ու նրանց կամակատարների դատարանի առաջ կանգնելու օրը»,-ասուած է յայտարարութեան մէջ»:*

## ԼՈՒՐԵՐ

# «ՇԻՐԻՆՕՂԼԻՆ ՏԱՐԲԵՐ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ Է ԱՊՐՈՒՄ»



Թուրքիոյ վարչապետ Ռեջէփ Էրդողանի եւ Իսթանպուլի Սուրբ Փրկիչ հայկական հիւանդանոցի հոգաբարձուներու խորհուրդի նախագահ Պետրոս Շիրինօղլուի հանդիպումը

Մարտ 26-ին Անկարայում կայացաւ Թուրքիայի վարչապետ Ռեջէփ Էրդողանի եւ Իսթանպուլի Սուրբ Փրկիչ հայկական հիւանդանոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ Պետրոս Շիրինօղլուի հանդիպումը:

Հանդիպումից յետոյ Շիրինօղլուն պատասխանել է լրագրողների հարցերին: Նա ասել է, թէ եկել է վարչապետին յատուկ շնորհակալութիւն յայտնելու, քանի որ 8 կալուածներ վերադարձուել են հայկական համայնքին:

Լրագրողները հարցեր են տուել 1915 թուականի մասին, Էրդողանի վերջին յայտարարութիւնների մասին:

Պետրոս Շիրինօղլուն ասել է, թէ 1915 թուականին տեղի ունեցածի մասին չէր ցանկանայ օգտագործել ցեղասպանութիւն բառը: Անշուշտ, գիտէ, որ շատ անախորժ դէպքեր են տեղի ունեցել, երկու կողմերն էլ տառապել են, բայց «հին դէպքերը քրքրելը լաւ չէ»:

Թուրքիայի հայ համայնքի մի շարք ներկայացուցիչների ստեղծած կայքէջում, որը թարգմանաբար նշանակում է՝ «Մենք մէկ ուրիշ մի Թուրքիայում ենք ապրում», ներկայացուած են պարզաբանումներ՝ կապուած Շիրինօղլուի՝ Թուրքիայի վարչապետի հետ հանդիպման ժամանակ արած յայտարարութիւնների վերաբերեալ:

Հայ համայնքի կայքէջում նշւում է, որ նախ Շիրինօղլուն հայ համայնքի ղեկավար չէ եւ իրաւունք չունի խօսելու հայկական համայնքի անունից: Նա կարող է միայն իր սեփական տեսակէտը ներկայացնել, այլ ոչ թէ ամբողջ համայնքի:

Մենք ապրում ենք ամբողջովին այլ Թուրքիայում, եւ Շիրինօղլուի ներկայացրած «բացարձակ անվտանգ Թուրքիան» ճիշդ չէ: Հայերն այս երկրում ապրում են վախի մէջ, իսկ վերջերս նաեւ քաղաքական գործիք են դարձել: Իսկ Շիրինօղլուն ոչ մի քայլ չի արել Հրանդ Դինքի սպանութեան դատավարութեան գործընթացն արագացնելու համար երեք տարիների ընթացքում:

Սխալ է նաեւ Շիրինօղլուի կողմից 1915 թուականի դէպքերը որպէս «երկու ընկերոջ միջեւ վէճ» անուանելը:

# ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԵՏՐՈՅՈՒՄ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԶՈՀԵՐԻՑ ՄԷԿԸ ՀԱՅ Է

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Մարտ 30-ին մոսկովեան հիւանդանոցներից մէկում մահացել է հայազգի Վալենտինա Եղիազարեանը, ով վիրաւորուել էր մի օր առաջ Ռուսաստանի մայրաքաղաքի մետրոյի «Լուբեանկիա» եւ «Պարկ կուլտուրի» կայարաններում իրականացուած պայթիւններից:

«Այս պահի դրութեամբ ճշդուած տուեալներով, ցաւոք սրտի, հայազգի զոհ կայ, որը մահացել է այսօր հիւանդանոցում: 17 տարեկան Վալենտինա Եղիազարեանը, - «Ազատութիւն» ռադիոկայանին տեղեկացրեց Հայաստանի արտգործնախարարութեան խօսնակի պաշտօնակատար Տիգրան Բալայեանը:

Նա նաեւ յաւելեց, որ վիրաւորուած երկու հայերը՝ Ռուսաստանի երկու հայազգի քաղաքացիներ՝ 18-ամեայ Յասմիկ Մարտիրոսեանը եւ 55-ամեայ Աննա Պորկաշեանը, գտնւում են հիւանդանոցում, եւ բժիշկները բաւարար են գնահատում նրանց վիճակը:

Ըստ նախնական տուեալների՝ պայթիւնները իրականացրել են երկու կին մահապարտ ահաբեկիչներ, որոնք օգտագործել են մինչեւ 3 կիլոգրամ տրոտիլի հզօրութեան պայթուցիկ սարքեր:

Պայթիւններից յետոյ Ռուսաստանի մայրաքաղաքում, մասնաւորապէս՝ տրանսպորտում, ուժեղացուել են անվտանգութեան միջոցառումները:

Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը յայտարարել է, որ երկրում տեռորի ճնշման եւ ահաբեկչութեան դէմ պայքարի գիծը պետութիւնը շարունակելու է «առանց տատանուելու եւ մինչեւ վերջ»:

# ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Բրիտանական կառավարութիւնը յիշում է դարասկզբի ցաւալի դէպքերը, սակայն չի կարող կատարել որեւէ քայլ, որը կը խոչընդոտի հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորմանը, Մարտ 29-ին Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Լորդերի պալատում յայտարարեց Բարոնուհի Գլենիս Քինոկը, ով ներկայացնում է Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի նախարարութիւնը Լորդերի պալատում:

Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Լորդերի պալատում Բարոնուհի Քերոլայն Քոկսի նախաձեռնութեամբ կայացան Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ քննարկումներ: Մօտ 1 ժամ տեւած քննարկման սկզբին Բարոնուհի Քոկսը ներկայացրեց Հայոց ցեղասպանութեան հիմնական փաստերը, ժամանակի միջազգային գործիչների արձագանքը դէպքերին, եւ հենց Մեծ Բրիտանիայի ունեցած փաստաթղթերը դարասկզբի հայկական ջարդերի մասին: Նա կոչ արեց կառավարութեանը միանալ քաղաքակիրթ ազգերի շարքին, որոնք ճանաչել են Հայոց Ցեղասպանութիւնը:

Սատարող ելոյթներ ունեցան Լորդերի պալատի եւս մի քանի անդամներ: Լորդ Էյվբուրին օրինակ, հայազգի պատմաբան Արա Սարաֆեանի հետ տարիներ շարունակ փորձում է քննարկումներ սկսել Թուրքիայի խորհրդարանականների հետ եւ աջակցում է Կապոյտ գիրք կոչուող փաստաթղթերի ժողովածուի տարածմանը Թուրքիայի ներսում: Նա իր ելոյթում խօսեց Թուրքիայում խօսքի ազատութեան սահմանափակումների ու Ցեղասպանութեան խնդիրը բարձրաձայնելու դժուարութիւնների մասին:

Պատասխան ելոյթներ ունեցան լորդեր, ովքեր դէմ են ցեղասպանութիւն բառի կիրառմանն ու Բրիտանիայի միջամտութեանը հայ-թուրքական խնդիրներին:

Բանավէճի աւարտին Մեծ Բրիտանիայի Արտգործնախարարութեան ներկայացուցիչը պատասխանեց հարցերին ու ներկայացրեց կառավարութեան դիրքորոշումը: Բարոնուհի Քինոկը հաւաստիացրեց, որ կառավարութիւնը խորապէս ցաւում է «100 հազարաւոր հայերի համար, ովքեր մահացել են սովից ու համաճարակներից առաջին համաշխարհային պատերազմի սկզբին», բայց մերժեց յիշատակութեան օր սահմանելու կամ ցեղասպանութիւն բառը կիրառելու մասին առաջարկները:

Բարոնուհի Քոկսը, ով նախագահում է Լորդերի պալատի Հայկական խորհրդարանական խումբը, խոստանում է, որ շարունակելու է առաջիկայում հայկական հարցը բարձրացնել ու աշխուժացնել քննարկումները խնդրի շուրջ:

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

մարդիկ, որոնք հրաւիրում են այդ գոնկրէսը ոչ-իրաւապաշտպան են»:

Յայտարարութեամբ հանդէս եկած է նաեւ «Իրաւունքի եւ Ազատութեան Կենտրոն» հասարակական կազմակերպութեան նախագահ Վարդան Յարութիւնեան, որ ըսած թէ, ինք թէեւ հրաւէր ստացած է, բայց հրաժարած է մասնակցիլ գոնկրէսին, որովհետեւ միջոցառման ելոյթներով հանդէս պիտի գան «2008-ի մարտեան դէպքերուն յաջորդած անօրինական դատավարութիւններու հեղինակներն ու կատարողները»:

«Իսկ մենք յայտնուելու ենք լոկ լսողի դերում եւ զրկուած ենք լինելու պատասխան խօսք ասելու հնարաւորութիւնից», - աւելցուցած է Յարութիւնեան:

Հելսինքեան Քաղաքացիական Ասամբլիայի Վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունց նոյնպէս հրաժարած է մասնակցիլ, թէեւ հրաւէր ստացած է: Ան յիշեց նոյն փաստարկները՝ աւելցնելով թէ, քանի որ միջոցառման իրաւապաշտպան կառոյցներու ներկայացուցիչներու ելոյթներ նախատեսուած չեն, ապա եզրափակիչ փաստաթուղթին մէջ նկատի կ՚առնուին միայն Հայաստանի պետական մարմիններու ներկայացուցիչներու տեսակէտները:

Մասնակցութեան հրաւէր ստացած է նաեւ Հելսինքեան Կոմիտէի նախագահ Աւետիք Իշխանեան, որ յայտնած է թէ, կը մասնակցի միայն այն պարագային, եթէ ելոյթի իրաւունք ունենայ:

Հայաստանէն FIDH-ին անդամակցող միակ կազմակերպութեան՝ «Քաղաքացիական Հասարակութեան Ինստիտուտ» հասարական կազմակերպութեան նախագահ Արման Դանիէլեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին պարզաբանելով ելոյթներու հարցը ըսած է, որ գոնկրէսը նախեւառաջ պիտի կեդրոնանայ միջազգային իրաւապաշտպան խնդիրներու շուրջ, իսկ Հայաստանի մէջ մարդու իրաւունքներու վիճակի մասին ելոյթով հանդէս պիտի գայ ինք անձամբ ու խօսի նաեւ 2008-ի Մարտի դէպքերու ու անոնց յաջորդած զարգացումներու մասին:

# ԹՈՒՐՔԻԱՆ ՍՏԱՑԱ՞Ւ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԽՈՍՏՈՒՄԸ

ԱՄՆ Պետքարտուղար Հիլարի Քլինթոնը հաւաստիացրել է Թուրքիային, որ Սպիտակ Տունը դէմ կը լինի Կոնգրէսի բանաձեւին, որը կ՚որակի առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած կոտորածները որպէս ցեղասպանութիւն, ասել է Թուրքիայի արտաքին գործերի նախարարը: Այս մասին տեղեկացնում է Ռոյթերզը:

Նախարարութիւնը նման յայտարարութիւն է տարածել Դաւութօղլուի՝ Քլինթոնի հետ հեռախօսազրոյցից յետոյ:

Թուրքիան ուզում է հաւաստիացումներ ստանալ, որ Օբաման չի օգտագործի «ցեղասպանութիւն» բառը իր Ապրիլ 24-ի ելոյթում, այդ նպատակով նա կանխել էր թուրք բարձրաստիճան այցերը ԱՄՆ:

Դաւութօղլուն ասել է Քլինթոնին, որ ԱՄՆ Կոնգրէսի որոշումը բացասաբար է ազդել Հարաւային Կովկասի անվտանգութեան վրայ:

«Մենք հասկանում ենք դեսպանին հետ կանչելու Թուրքիայի որոշման պատճառները, Մարտ 29-ին կայացած բրիֆինգում լրագրողներին ասել է պետդեպարտամենտի խօսնակ Ֆիլիպ Քրոուլին՝ յաւելելով. - Մենք յոյս ունենք, որ դեսպանը շուտով կը վերադառնայ»: Այս մասին տեղեկացնում է Ազատութիւն ռադիոկայանը:

«Դա ջերմ եւ կառուցողական քննարկում էր: Երկուսն էլ՝ նախարարը ու պետքարտուղարը, ընդգծել են, որ Թուրքիայի ու Միացեալ Նահանգների միջեւ ռազմավարական գործընկերութիւնը կարեւոր է», - ասել է Քրոուլին:

## Ս. ԶԱՏԻԿ

# ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՍՈՒՐԲ ԶԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈԶԸ

«Խաղաղութիւն ձեզի, այդ ես եմ, մի՛ վախնաք» (Ղուկ. ԻԴ 36)

*Քրիստոսի հրաշալի Յարութեան շնորհած պարգեւն է խաղաղութիւնը, որուն վայելքը կ'ունենայ մարդը, երբ քաջ հաւատքով կ'ըմբռնէ կատարուած մեծ հրաշքին անչափելի տարողութիւնը:*

*Յարութեան Տօնը ապրելու նախապայմանը այն է, որ մեր մէջ շարժի հաւատքի կեանքը: Այլապէս, մարդկային միտքն ու բանականութիւնը կարող չեն խորապէս ներթափանցելու Յարութեան խորհուրդի ծալքերէն ներս եւ այնտեղ գտնելու դէպի նոր կեանք առաջնորդող կեանքը ի*

*Քրիստոս: Քանզի Յարութենէն յետոյ, երբ, Քրիստոս կը մօտենար Իր առաքեալներուն, Ան ոչ միայն կ'ողջունէր զիրենք «Խաղաղութիւն ձեզի, այդ ես եմ, մի՛ վախնաք» պատգամով, այլեւ՝ Իր խօսքին մէջ կը կատարէր որոշակի հաստատում մը, թէ Իր Անձով էր պայմանաւորուած խաղաղութիւնը մարդկանց ու աշխարհի կեանքին մէջ:*

*Քրիստոնեայ հաւատացեալը Յարութեան Տօնին կը յայտարարէ հետեւեալ մաղթանքը. «Քրիստոս Յարեաւ ի մեռելոց», այն քաջ համոզումով, որ Անոր Յարութիւնը կը դառնար լոյսի ճանապարհը խաւարին մէջէն քայլող մարդկութեան համար: Եւ այս մաղթանքը յայտարարող քրիստոնեան անտարակոյս իր հոգիին մինչեւ խորքը կը լսէ Քրիստոսի պատգամը. «Խաղաղութիւն ձեզի, այդ ես եմ, մի՛ վախնաք», ու անով իսկ իր մէջ կը հաստատէ հոգեւոր նոր կեանքի մը ծնունդը: Իսկ Յարութեան խորհուրդը տօնախմբել, առանց այն դարձնելու ոգին մեր առօրեային, ապա կը նշանակէ, որ Յարութեան մեծ Տօնին իմաստը դեռեւս ըմբռնած չենք: Քսաներորդ դարու մեր Եկեղեցւոյ լուսամիտ Հայրերէն մէկը այսպիսի սահմանում մըն է տուած խօսելով Քրիստոսի Յարութեան մասին.*

*«Քրիստոսի Յարութիւնը պէտք է մեր մէջ վերածուի այն հոգեկան ոյժին, որ խաւարին մէջ լոյս կը ծագեցնէ, անձկութեան մէջ յոյս կը ներշնչէ, վախին ու կասկածին դիմաց հաւատքով կը զօտեպնդէ, երջանկութեան մէջ համեստութիւն կը խառնէ, անձնական շահին մէջ ուրիշին շահն ալ կը ներառնէ, մէկ խօսքով՝ ամէն բանի մէջ սիրոյ զօրութեամբ մը կը տոգորէ եւ անմահութեան տենչով ու տեսիլքով կը վառէ»:*

*Հետեւաբար, Քրիստոսի Յարութիւնը տօնախմբել կը բացատրէ աստուածային լոյսին առատացումը մեր հոգեւոր կեանքին մէջ: Քրիստոսի Յարութիւնը տօնախմբել կը նշանակէ մեր մէջ գտնել յոյսը՝ նոր տեսիլքներու: Քրիստոսի Յարութիւնը կը պարգամէ խոնարհ կեանքով մը ապրելու ընթացքը: Քրիստոսի Յարութիւնը մէկ խօսքով բոլորը կը համակէ աստուածային այն սիրով, որ մեր կեանքը դարձնենք պատարագում ու ընծայում Աստուծոյ Ս. Սեղանին:*

*Քրիստոս կը պարգամէ. «Խաղաղութիւն ձեզի, այդ ես եմ, մի՛ վախնաք»:*

*Հրաւէր է սա ուղղուած բոլորիս, որպէսզի հաղորդուինք Քրիստոսի Յարութեան Խորհուրդով, որպէսզի այլակերպուինք, լոյս հագնինք եւ սրբութիւն հաղորդենք:*

*«Խաղաղութիւն ձեզի, այդ ես եմ, մի՛ վախնաք»:*

*Հրաւէր է սա ուղղուած բոլորիս, որպէսզի վկայախօս դառնանք Քրիստոսի Յարութեան, չարչարակից դառնալով Անոր, որպէսզի մեր կեանքը լեցնենք գոհաբերութեան խորհուրդով:*

*«Խաղաղութիւն ձեզի, այդ ես եմ, մի՛ վախնաք»:*

*Հրաւէր է այս նոր ուխտին, որպէսզի նոր աղօթք վերառաքենք առ Աստուած եւ Անոր առաջնորդութեամբ մեր կեանքը վերապրինք որպէս արտայայտութիւնն ու արձագանգումը աստուածային սիրոյ:*

*Քրիստոսի Յարութեան Խորհուրդը երկհազարամեակ մը պայծառակերպած ու հրաշագործած է ժողովուրդներու կեանքը: Անոր աստուածային զօրութիւնը Յարութեան Խորհուրդին ընդմէջէն ճառագայթած, հոգեւոր ուժականութիւն ու իմաստութիւն է պարգեւած մարդուն, որպէսզի դառնանք ստեղծագործակից Արարչին: Պահը մերն է, որպէսզի լեցուինք Յարութեան շունչով, արարենք Յարութեան տեսիլքով եւ Քրիստոսի Յարութեան հրաշքին ջահակիրը դարձնենք գալիք սերունդները:*

*«Խաղաղութիւն ձեզի, այդ ես եմ, մի՛ վախնաք»:*

*Թող Քրիստոսի այս պատգամը դարձնենք մեր սրտին աղօթքը, որպէսզի ապրինք Քրիստոսանման կեանքով, քայլենք Անոր գծած ճանապարհէն, իւրաքանչիւր մարդու մէջ փնտռենք եւ գտնենք աստուածայինն ու բարին, հոգին լեցնենք ստեղծագործելու տենչով եւ վերջապէս զգանք անբացատրելին, որ մեր կեանքը վերածեր ենք լոյսի աղբիւրին, որուն ակունքէն ճառագայթողը՝ Աստուծոյ խօսքն է, կեանքի ջուրն է, որմէ խմողը կ'ապրի անմահութեան ճաշակը:*

*«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»*

*«Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»*

***ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ***
***Առաջնորդ***

---

# ԿՈՉ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

***Շարունակուած էջ 1-էն***

ցուցիչները, եւ տեղական, նահանգային եւ դաշնակցային քաղաքական դէմքեր խօսք պիտի առնեն:

Որպէս յարգանք մեր նահատակներուն, կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդին, որ այդ օր նաեւ ծաղիկներ զետեղեն Նահատակաց Յուշարձանին:

Յուշարձանի հասցէն է՝

**Bicnell Park**
**900 Via San Clemente**
**Montebello, California**

Պիտի տրամադրուին ինքնաշարժներ՝ զանազան վայրերէ հայրենակիցները Մոնթեպելլօ տանելու համար: Հետեւեցէք մամուլի մէջ լոյս տեսնելիք ցուցմունքներուն:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95 ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ**

---

## ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԶԱՏԿԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ

# Ո՛ՂՋ Է ԱՆ

*«Մի փնտռէք ողջը մեռեալներուն մէջ: Հոս չէ. յարութիւն առաւ անիկա», ըսաւ հրեշտակը կիներուն որ գերեզման փութացած էին օծելու համար իրենց պաշտելի Վարդապետին մարմինը:*

*Եւ սակայն կասկած չկար որ Յիսուս մեռած էր: Անոր մահը երեւութային բան մը չէր կամ մահուան ձեւացում մը: Իրական մահ էր, ունէր մահկանցուի մահուան պէս: Շատեր, որոնք անոր հետեւած էին Պիղատոսի պալատէն մինչեւ Գողթոզայ լեռը, կրնային վկայել թէ անիկա խաչին վրայ մեռած էր, կրելէ ետք ահաւոր, աննկարագրելի չարչարանքները: Զինուորներն իսկ հաստատած էին թէ անիկա իրապէս մեռած է, եւ լուրը հաղորդած էին կառավարիչին:*

*Յիսուս, Աստուծոյ Որդի, ազատօրէն ընտրած էր մահը: Կատարեալ մարդ պիտի չըլլար ան եթէ մահը մերժած ըլլար: Մահը ընտրած էր իբր միակ միջոցը ապացուցելու համար թէ ինք յօժար էր բաժնելու ամբողջովին, կատարելապէս, մեր բնութիւնն ու ճակատագիրը: Ատոր համար, երբ իր հոգին աւանդեց, ըսաւ. «Ամէն ինչ վերջացաւ»: Ան իրագործած էր մինչեւ վերջին կէտը իր Հօր ծրագրին, մեր ազատագրումին ծրագիրը որ ի յաւիտենից վճռուած էր:*

*Յիսուս մահը ընդունեցաւ նաեւ ուրիշ պատճառի համար. կ'ուզէր ցոյց տալ թէ մահը, պատիժ մը ըլլալով հանդերձ, անդարմանելի աղէտ մը չէր: Ան մեռաւ մեզի սորվեցնելու համար թէ մահը վերջին, բայց ոչ վերջնական, անհրաժեշտ ուղեւորութիւնն է մեր կեանքին, եւ միակ ուղին՝ հասնելու անվերջ, տեւական կեանքի:*

*Մենք, իբր քրիստոնեայ, կը ճանչնանք թէ ֆիզիքական մահը յոռեգոյն բանը չէ որ կրնայ պատահիլ մեզի. նոյնիսկ երբ աչքի առջեւ ունենանք մահուան գարշելի դիմագիծը, երբ կը տեսնենք զոհերը պատերազմի, բնական աղէտներու, վիժումի, անօթութեան, հիւանդութեան եւ այլ դժբախտութիւններու:*

*Որովհետեւ կայ աւելի սոսկալին. բարոյական ոճիրը, հոգիներու սպանդը, շնորհիւ ոմանց գայթակղալից կեանքին ու վարքին, չարիքը որ յառաջ կու գայ բարոյական զեղծումներէն, անբարոյ մամուլէն եւ ապականիչ տեսարաններէն, բարոյական զեղծումներէն, անբարոյ մամուլէն եւ ապականիչ տեսարաններէն, դրամի եւ բռնութեան տիրապետութիւնը տկարին եւ աղքատին վրայ: Կարելի չէ անտեսել չարին այս ծայրահեղ արտայայտութիւնները աշխարհի վրայ առանց վրդովումի:*

*Սակայն Յիսուս սորվեցուց մեզի վախնալ՝ ոչ թէ մարմնի, այլ հոգիի մահէն: Եւ ինքն իսկ ապրեցաւ եւ մեռաւ համաձայն իր ուսուցումին, ընդունելով իր սեփական մահը, ոչ միայն իր Հօր կամքը կատարելու համար, այլ նաեւ իբր միակ ու բացարձակ միջոցը՝ ճշմարիտ կեանքին*

***Շար.ը էջ 19***

******************************

## ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ԶԱՏԿՈՒԱՅ ՊԱՏԳԱՄԸ

# ԹԱՓՈՒՐ ԳԵՐԵԶՄԱՆԷՆ ԱՆԴԻՆ

*Երկու հազար տարիէ ի վեր Քրիստոնեայ Եկեղեցին եւ երկրիլիոնաւոր քրիստոնեաներ կը տօնեն Քրիստոսի կեանքին եւ առաքելութեան հետ կապուած կարեւորագոյն եւ հրաշալի դէպքերէն մէկը, Անոր Յարութիւնը:*

*Սկեպտիկներ եւ թերա-հաւատներ, ինչպէս անցեալին՝ ներկայիս ալ կը նկրտին ուրանալ Քրիստոսի Յարութիւնը այն հիման վրայ թէ ան գիտականօրէն փաստելի եւ ապացուցանելի բան մը չէ: Բայց անոնք մտահան կ'ընեն այն իրողութիւնը որ այս աշխարհի վրայ բաներ կան, որոնք պէտք չունին գիտական փաստերու: Օրինակ, ո՞վ կրնայ բացատրել սէրը գիտական եւ առարկայական չափանիշներով կամ մարդկային հինգ զգայարանքներով: Սէրը տեսանելի եւ շօշափելի բան մը չէ եւ պէտք չունի փաստի: Սիրող եւ սիրուող անհատներ միայն իրազեկ են անոր տիրական գոյութեան:*

*Քրիստոնեայ Եկեղեցին եւ ճշմարիտ քրիստոնեաներ կը հաւատան Քրիստոսի մարմնաւոր Յարութեան, բայց ամենէն ազդու փաստը կու գայ անոնցմէ, որոնք Քրիստոսի Յարութեան զօրութիւնը կ'ապրին եւ կ'ապացուցանեն զայն իրենց կեանքովն ու կենցաղովը:*

*Բոլոր դարերու՝ ամէն տեսակ «Թերահաւատ Թովմաս»ներուն, որոնք Քրիստոսի Յարութեան հաւատալու համար՝ գիտական փաստեր եւ ապացոյցներ կը պահանջեն՝ յարուցեալ Յիսուսի մարտահրաւէրը նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեան. «Երանի անոնց, որոնք առանց զիս տեսնելու կը հաւատան» (Յովհ. 20.29):*

*Այս կը նշանակէ թէ անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր անհատ անձնական փորձառութիւնը ունենայ յարուցեալ Քրիստոսի ներկայութիւնը զգալու եւ ապրելու իր կեանքին մէջ:*

*Անտարակոյս Յիսուսի Թափուր գերեզմանը անհերքելի փաստ մըն էր իր խաչելութենէն առաջ ըրած այն յայտարարութեան թէ ինք յարութիւն պիտի առնէր եւ իր մահուամբ մահը պիտի խափանէր եւ յաղթական կեանքը լոյս պիտի հանէր: Սակայն, Անոր Յարութեան զերագոյն եւ պերճախօս վկայութ-իւնը կու գայ անոնցմէ, որոնք Թափուր գերեզմանէն անդին կը տեսնեն եւ Անոր յարութեան զօրութիւնը կ'ապրին իրենց առօրեայ կեանքին մէջ:*

*Զի բաւեր գիտնալ թէ խաչեալ Քրիստոսի գերեզմանը Թափուր է: Անհրաժեշտ է գիտնալ որ Քրիստոս յաղթական Տէր է եւ յաւէտ կ'ապրի եւ կարող է մեզ մեր մեղքերէն ազատագրել՝ որպէս զի մենք ալ յաւիտեան ապրինք:*

*Այս իրողութեան լոյսին ներքեւ Զատիկը պատմական ոգեկոչելի դէպք մը ըլլալով հանդերձ՝ կը դառնայ նաեւ Քրիստոսով ապրուած կեանքի տօնակատարութիւնը, արդ, բոլոր անոնք, որոնք յարուցեալ Քրիստոսի շնորհած կեանքը ընդունած են՝ կրնան ցնծութեամբ ողջունել զիրար զատկական աւանդական պատգամով - «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:*

**Վեր. Դոկտ. Վահան Յ. Թութիկեան**
**Գործադիր Տնօրէն Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի**

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

# ԹՈՒՐՔԸ ՉԻ՛ ՓՈԽՈՒԻՐ

ՀՐԱՆԴ ԱՐՄԷՆ

Թուրքը չի՛ փոխուիր: Բարեփոխումը իր քաղաքական մշակոյթին մէջ տեղ չունի:

Բոլոր անոնք, որոնք կը կարծեն, թէ Եւրոմիութեան ճնշումներուն իբր հետեւանք Թուրքիա ժողովրդավար սկզբունքները հակասող իր օրէնքները բարեփոխած է, կը սխալին:

Օրէնքի բարեփոխութիւնը թուղթի վրայ՝ ոչինչ կ'արժէ: Հիմնականը մարդոց մտայնութեան փոփոխութիւնն է: Մարդոց մտայնութեան փոփոխութեան համար ալ, Թուրքիոյ ամբողջական տարածքին վրայ, մի քանի սերունդ պէտք է եւրոպական քաղաքակրթութեամբ հասակ նետէ:

Կ. Պոլսոյ եւ Զմիւռնիոյ նման բազմազգ եւ պատմական քաղաքներու մէջ որոշ չափով «յղկուած» եւ Միջեկրականի ափերու զբօսաշրջիկային վայրերու Թուրքին հետ զբօսաշրջիկի հոգեբանութեամբ շփուիլ եւ քաղաքին բնական գեղեցկութենէն հմայուած Թուրք ժողովուրդին մասին լաւ տպաւորութիւններ ունենալ ու այդ ալ աշխարհին փոխացնել, ուրիշ բան չէ եթէ ոչ ինքնախաբէութիւն եւ ճշմարտութեան խեղաթիւրում:

Այսօրուայ Թուրքին իսկական դիմագիծը միայն Թուրքը մօտէն ճանչցող մը կրնայ տեսնել եւ ոչ թէ Թուրքին հոգեբանութեան անտեղեակ օտարական մը:

Թուրքը բնածին սովորութիւն մը ունի՝ շողոքորթել: Զբօսաշրջիկային վայրերու դիմակաւորուած ծառայողներն ու մատուցողները, ի սէր զբօսաշրջիկէն իրենց կորզելիք ձեռաձիրին, «ամենաջերմ» բառերով անոնց հիւրասիրութիւն ցոյց կու տան, անթերի սպասարկութիւն կը կատարեն եւ իրենց ապրուստը ապահովող այս անձերը շլացուցած կը ճամբեն:

1934-ին Անատոլուի զանազան գիւղերուն մէջ ապրող հայերը տեղահանութեան ենթարկող Թուրքը, 1942-ին հայը «Ունեւորութեան Տուրք»-ի ենթարկելով զայն սնանկացնող Թուրքը,

Ըստ Լոզանի Դաշնագրի 39-րդ յօդուածին, ոչ-մահմետական փոքրամասնութիւնները մահմետական քաղաքացիներուն օգտուած քաղաքացիական իրաւունքներէն պիտի օգտուին եւ Թուրքիոյ մէջ բնակող ամէն անձ, առանց կրօնքի խտրութեան, օրէնքի առջեւ հաւասար պիտի նկատուի: Սակայն եւ այնպէս, տակաւին այսօր իսկ Թրքահպատակ հայուն եւ իսլամացած (տէօնմէ) հայուն այլազան դժուարութիւններ յարուցանող Թուրքը,

Ըստ Լոզանի Դաշնագրի 42-րդ յօդուածին, փոքրամասնութիւններու եկեղեցիները, սինակոկները, գերեզմանատուները, կրօնական հաստատութիւնները փոխանակ պաշտպանելու, յատկապէս 1950-էն ի վեր Արեւմտեան Հայաստանի հայկական եկեղեցիներն ու վանքերը պայթեցնող, անոնցմէ ոմանք մզկիթի վերածող Թուրքը,

1955-ին 6-7 Սեպտեմբերի դէպքերով հայոց տուները եւ գործատեղիները թալանող Թուրքը,

1976-ին հայ համայնքային կալուածները անօրէնօրէն գրաւող Թուրքը,

Իշխանաց Կղզիներէն յատկապէս հայաշատ Գընալը Կղզիի հայերը, վերջին մի քանի տարիներու ընթացքին, կղզի «գբօսնելու» երթալով սարսափի մատնող Թուրքը,

2007-ին Հրանդ Տինքը նահատակող Թուրք ոճրագործը ու իր գործակիցներու բանակը,

Եկեղեցւոյ բակին մէջ «Պատրիարքը պիտի մեռցնեմ» գոռացող եւ կրակող Թուրքը,

2008ի Նոյեմբերին, Նացիական հասկացողութեամբ «Թուրքիան նոյն երկիրը պիտի ըլլա՞ր այսօր, եթէ հայերը եւ յոյները մեր երկրէն ներս ապրած ըլլային» հարցնող եւ «անհրաժեշտութիւն էր փոքրամասնութիւններու բնաջնջումը» ըսող Թուրքը,

1915-ի դէպքերուն մասին Թրքական սպայակոյտի նախագահութեան պատրաստած, սահմռկեցուցիչ տեսարաններով, իրողութիւնները խեղաթիւրուած, հայոց դէմ Թուրքերու ատելութեան զգացումը գրգռող, «փաստագրական» «Սարը Կէլին - Հայկական Հարցի Ներքին Ծալքերը» խորագրեալ խտաերիզները, 2009ի Փետրուարին, բոլոր նախակրթարաններէն, ներառեալ հայ նախակրթարաններէն ներս, աշակերտութեան ցուցադրելու պահանջով, դպրոցներուն ղրկած Թուրքը,

Հայաստանի տնտեսական պայմաններուն բերումով Թուրքիա՝ իր հայրերուն, մեծ հայրերուն երկիրը ապրուստ ապահովելու եկած 10-13 հազար Հայաստանցի հայը, աշխարհին որպէս 100հազար ներկայացնելէ յետոյ, զանոնք երկրէն վտարելու իր տրամադրութիւնը բացայայտ կերպով արտայայտող եւ մինչ այդ ալ Եւրոմիութեան անդամակցելու ցնորքէն տարուած, անոր դուռը բախող Թուրքը,

Տակաւին մի քանի օր առաջ հայու ձեռքով հայուն ճակտին մուր քսող հանրապետական Թուրքը, 1915-ին հայը ջարդող, անոր կալուածները, ինչքերը, դրամը յափշտակող, կիներն ու աղջիկները առեւանգող օսմանցի Թուրքէն բնաւ տարբերութիւն չունի:

* * *

26 Մարտ 2010 թուականին Թուրքիոյ վարչապետին հետ տեսնուելու համար Անգարա հրաւիրուած Պոլսահայ մի ոմն Պետրոս Շիրինօղլու, տեսութենէն յետոյ, մամլոյ ներկայացուցիչներուն հարցումներուն կը պատասխանէ:

Պետրոս՝ Յիսուսի 12 աշակերտներէն մին, «դեռ հաւը չխօսած՝ երեք անգամ» Յիսուսը կ'ուրանայ եւ կ'ըսէ. «Ես այն մարդը չեմ ճանչնար»: Պրն. Պետրոս Շիրինօղլու ալ, մեզի անծանօթ պատճառներով, գուցէ վարչապետին «չիրին երեւնալ»ու միտումով, կ'ուրանայ Ջարդերը եւ 1915ը կը նմանցնէ «գիրար շատ սիրող երկու բարեկամներու, երկու գործնկերներու միջեւ երրորդ կողմի գրգռութեան պատճառաւ ծագած կռիւի», որ «շատ գէշ կը վերջանայ»: Ըստ Շիրինօղլուի «այս խնդիրը շատ պեղելու պէտք չկայ» եւ ինք կողմակից չէ ցեղեսպանութիւն բառին գործածման:

Շիրինօղլու, »Հայերը Թուրքիոյ մէջ հանգիստ կ'ապրի՞ն, իրենք զիրենք ապահով կը զգա՞ն« հարցումին, իր շուրջիններուն նայելէ յետոյ, «Այո՛, հայեր Թուրքիոյ մէջ ինքզինքնին ապահով կը զգան: Թուրքիոյ մէջ ապրող հայէ մը գանգատ մը լսեցի՞ք» նախադասութեամբ կը պատասխանէ:

Շատ լաւ գիտցուած իրողութիւն է, թէ Թուրքիոյ քրէական օրէնքի 301 թիւ յօդուածը չի թոյլատրեր 1915ի Ջարդերը որպէս Ցեղասպանութիւն կոչել, սակայն Պրն. Շիրինօղլու ի՞նչպէս «գիրար շատ սիրող երկու բարեկամներ» կրնայ կոչել կողմերը, երբ կողմերէն մին, ըստ Օսմանեան օրէնքի, իր սուրին սրութիւնը հայու մը վզին վրայ կրնար փորձել, երբ կողմերէն մին երկու մահմետականի «վկայութեամբ» կրնար հայ մը դատապարտել, երբ կողմերէն միուն հարկահաւաքը հայ գիւղացիէն ամենայն բրտութեամբ կը գանձէր անոր վճարելու կարողութիւնէն ալ աւելին, երբ կողմերէն մին հայուն աղջիկն ու կինը կը բռնաբարէր, կ'առեւանգէր եւ արդարութիւն փնտռել կարելի չէր ըլլար:

Շարքը կարելի է երկարել:

Շիրինօղլու, մեծցած Թուրքիոյ մէջ, գուցէ, այս իրողութիւնները չգիտնայ, սակայն անկարել է որ հանրապետութեան շրջանին կիրարկուած Ունեւորութեան Տուրքէն, 6-7 Սեպտեմբերէն, յաջորդական դէպքերէն, Հրանդին, օր ցերեկով, պողոտայի վրայ սպաննութենէն, դպրոցներուն հեռատիպով ղրկուած սպառնալիքներէն անտեղեակ ըլլայ:

Պրն. Շիրինօղլու ո՞ր եւ ի՞նչպիսի ապահովութեան մը մասին կը խօսի:

Պէտք չէ զարմանալ, եթէ վարչապետը մի քանի օր յետոյ, քաղաքական հրապարակ իջնէ ու Շիրինօղլուի այս անխոհեմ արտայայտութիւնները, որպէս իրողութիւն, միջազգային հանրութեան ծախէ:

100հազար Հայաստանցի հայը Թուրքիայէն արտաքսելու պատրաստ վարչապետը, տեսակցելու համար կ'երեւի Պոլսահայ յարմարագոյն անձը գտած է: Անձ մը, որու ձեռքով հայուն ճակտին մուր զսեց, «իրողութիւնը խեղաթիւրող» պիտակը փակցուց: Մինչդեռ իրողութիւնները խեղաթիւրողները Շիրինօղլուն Անգարա հրաւիրողներն են:

Շիրինօղլու կ'ըսէ, թէ անցեալ տարուայ Նոյեմբերին, երբ վարչապետին հետ կը տեսակցէին, իր բարեկամներէն մին տուած էր այդ սխալ տեղեկութիւն եւ վարչապետն ալ «վստահելով» իր հայ հպատակներէն ստացած այս տեղեկութեան, այդ թուանշանը յաճախ գործածած էր: Շիրինօղլու վարչապետին թէ՛ շնորհակալութիւն կը յայտնէ՝ անոր հայերուն վրայ ունեցած վստահութիւն համար, թէ ալ անկէ ներողութիւն կը խնդրէ՝ տրուած սխալ տեղեկութեան համար:

Հարց է, թէ Շիրինօղլու իր բարեկամին այդ սխալը ի՞նչու Նոյեմբերին, տեղւոյն վրայ չէր սրբագրած եւ ի՞նչու այդ սրբագրութիւնը վարչապետին 100հազարի հարցով թէ՛ ներսէն եւ թէ դուրսէն, ամենաուժքին ձեւով պախարակուելէն վերջ կազմակերպուած այս տեսութենէն յետոյ կ'ընէր:

Շիրինօղլու, եթէ կը խորհի, թէ այսպիսի յայտարարութեամբ վարչապետին փախուստի ճամբայ հայթայթած ու քաջագործութիւն մը կատարած է, կը սխալի:

Քաջագործութիւնը, պայմանները ինչ-որ ալ ըլլան, լուռ կենալը գիտնալ, հայութիւնը չվարկաբեկել եւ հայուն պատիւը բարձր պահելն է:

* * *

Ջարդէն ի վեր 95 տարիները անցան, դերակատարները փոխուեցան, բայց ոչ մտայնութիւնը:

Թէեւ այսօր կան մի քանի յառաջադէմ յօդուածագիրներ, մի քանի յանդուգն հրատարակիչներ, մի քանի ինքնագիտակից պատմաբաններ, սակայն անոնք ճնշիչ մեծամասնութեան մէջ չնչին փոքրամասնութիւն մը կը կազմեն:

Այս տարուայ Մարտ ամսուայ երկրորդ կիսուն Թուրք Փրոֆ. Տօքթ. Եօզէր Սէնճէրի ստորագրութեամբ հրապարակուած հարցախոյզի մը համաձայն, Թուրք ժողովուրդին 48.8 առ հարիւրը Հայաստանցի հայերուն արտաքսման համամիտ է, 33.9 առ հարիւրը համակարծիք չէ, իսկ 17.3 առ հարիւր գաղափար չէ յայտնած:

Ահա՛, յաչս ոմանց փոխուած նկատուած Թուրքիոյ իսկական նկա-

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ**

AUTHORIZED INDEPENDENT AGENT
Anthem. Blue Cross
BEDROS S. MARONIAN
818-500-9585

CA LIC.#0494056 • BMaronian@AOL.com
FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## ԱՊՐԻԼ 24

# ԱՐՄԱՒԵՆԻՆ ՍԿՍԱՒ ՊՏՈՒՂ ՏԱԼ

**ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ**

Նախապէս գրած մէկ յօդուածիս խորագիրն էր «Արմաւենին տնկողին թոռնիկը կ'ուտէ պտուղը»: Արդարեւ, մեզի նախորդող սերունդներին տնկած արմաւենին սկսաւ պտուղ տալ «Հայկական Ցեղասպանութիւնը ճանչցող պետութիւններու ցանկին վրայ նորերու յաւելումով: Այսպէս Մարտ 4ին Մ. Նահանգներու Քոնկրէսի յատուկ Յանձնախումբը 22-ի դէմ 23 քուէով ընդունեց Հայոց կրած ցեղասպանութեան վաւերականութիւնը, հակառակ նախագահ Օպամայի տատամսոտ եւ նախորդ արտայայտութիւններուն հակասող կարիքին եւ պետական քարտուղար Հիլըրի Քլինթընի կողմէ քոնկրէսին վրայ կատարուած ճնշումին: Ուշագրաւ է որ ցեղասպանութեան ճանաչումին հակառակորդները չեն ժխտեր պատմական իրականութիւնը, այլ իրենց հակառակութիւնը կը փորձեն արդարձնել վախ յայտնելով որ այդ որոշումը կ'ականահարէ Մ. Նահանգներու Իրաքեան եւ Աֆղանիստանի առաքելութիւնները, ու նաեւ Թուրք եւ հայ հաշտութեան փորձերը: Այս որոշման դէմ ընդդիմութիւնը ցոյց կու տայ նաեւ ետ դարձ մը նախագահ Օպամայի, փոխ նախագահ Ճօ Պայտընի եւ պետական քարտուղարուհի Քլինթընի կողմէ, որոնք նախապէս նեցուկ էին հայկական ցեղասպանութեան ճանաչման: Այս ժխտումը ցոյց կու տայ նաեւ անբարոյ հանգամանքը անոնց ներկայ դիրքին, որ հիմնուած է իրենց տնտեսական եւ քաղաքական շահերուն վրայ, անտեսելով ամբողջ ժողովուրդ մը բնաջնջելու Թրքական ոճիրը:

Մինչ Օպամայի վարչութիւնը կը դժուարանացնէ Ցեղասպանութիւնը ճանչցողներուն գործը՝ քոնկրէսի որոշման համար անհրաժեշտ 218 ձայները ապահովելու բուռն աշխատանքը կը շարունակուի 137 կողմնակիցներուն ցանկը աւելի ընդարձակելու համար: Մ. Նահանգներու մէջ յառաջ տարուող թէր ու դէմ աշխատանքին զուգահեռ՝ Ցեղասպանութեան հարցը այժմէական դարձած է զայն ճանչցողներուն թիւը օրէ օր աւելցնելով: Այսպէս, Մարտի 11ին Շուէտ եղաւ Ցեղասպանութիւնը ճանչցող վերջին պետութիւնը, որ իր անկողմնակալ կեցուածքով մեծ կշիռ ունի աշխարհի վրայ: Այս հարուածէն մեծապէս զայրացած Թուրքիան Սթոքհոլմի իր դեսպանը տուն կանչեց, ինչպէս նոյնը ըրած էր Մ. Նահանգներու քոնկրէսի որոշման դէմ իր դժգոհութիւնը յայտնելու համար: Քանի մը տարի առաջ Ֆրանսայի կողմէ ցեղասպանութիւնը ճանչնալու առթիւ եւս նոյնը ըրած էր, իրենց միջեւ գոյութիւն ունեցող տնտեսական ու քաղաքական կապերը խզելու սպառնալիքով, որոնք աննկատ մնացին Ֆրանսայի կողմէ եւ որուն օրինակը վարակիչ դարձաւ ուրիշ արդարամիտ պետութիւններու:

Քսաներորդ դարու առաջին եւ մեծագոյն Ցեղասպանութեան 95-ամեակին առթիւ մարդկութեան խիղճը աննախընթաց զարթօնք մը կը բոլորէ, գիտակցելով որ անպատիժ մնացած այս ոճիրը քաջալերեց նաեւ ուրիշ ոճիրներ եւ ցեղասպանութեան փորձեր, ինչպէս օրինակ, Հիթլերը մղելով հրեաներու ցեղասպանութեան եւ այդ առթիւ սինիքօրէն յայտարարելու որ «այսօր ո՞վ կը յիշէ հայկական ցեղասպանութիւնը»: Բայց սխալեցաւ Հիթլեր, ինչպէս համաշխարհային Ա. պատերազմը հրահրելուն, նոյնպէս հայոց ցեղասպանութեան մասին արտայայտած իր կարծիքին մէջ: Եւ ինչպէս որ Նիւրէնպէրկեան դատարանի վճիռով Գերմանիան ներողութիւն խնդրեց զոհէն, պարտաւորուելով նաեւ ամբողջական հատուցում կատարելու, այդպէս ալ հեռու չէ ժամանակը որ Ցեղասպանութիւնը կազմակերպած Օսմանեան Թուրքիոյ յաջորդները եւս պիտի պարտաւորուին բարոյական, նիւթական եւ հողային հատուցում կատարել հայոց ժողովուրդին:

ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 90-ՐԴ ԱՄԵԱԿԻՆ
Կազմակերպութեամբ՝
ՀԱՅ ԱՅՆԹԱՊՑԻՆԵՐՈՒ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Օրուան Բանախօս՝
ՓՐՈՖ. ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐԵԱՆ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ
Կիրակի, 11 Ապրիլ 2010
կէսօրէ ետք ժամը 2:00-ին
Տաղլեան Մշակութային Կեդրոնի սրահին մէջ
1201 N. Vine St., Hollywood, CA 90038

ARMENIAN AINTABTZY
CULTURAL ASSOCIATION
Presents
THE 90TH ANNIVERSARY COMMEMORATION
OF AINTAB HEROIC RESISTANCE
Keynote Speaker
Prof. Vahakn Dadrian
CULTURAL PROGRAM
Sunday, April 11, 2010, at 2:00 p.m.
at Taglyan Cultural Center
1201 N. Vine St., Hollywood, CA 90038

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
Հիւրասիրութիւն
FREE ADMISSION
Reception following Program

# ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 95-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔԸ

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտը, Պատմութեան եւ արեւելագիտութեան ինստիտուտների, ինչպէս նաեւ ՀՀ Սփիւռքի նախարարութեան եւ «Հայկական յուշարձանների ուսումնասիրութիւն» կազմակերպութեան հետ համատեղ 2010թ. Ապրիլի 19-20-ը Երեւանում կազմակերպում է միջազգային գիտաժողով Հայոց ցեղասպանութեան, մասնաւորապէս մշակութային ցեղասպանութեան հիմնախնդիրների շուրջ: Գիտաժողովի նպատակն է յստակ գնահատականներ տալ Օսմանեան կայսրութեան եւ ժամանակակից Թուրքիայի Հանրապետութեան տարածքում մեր օրերում շարունակուող հայկական մշակութային ժառանգութեան համատարած ոչնչացման քաղաքականութեանը, ինչպէս նաեւ անդրադառնալ դրա գաղափարական, քաղաքական ու մշակութաբանական հիմնաւորումներին եւ հետեւանքներին:

Գիտաժողովին մասնակցելու են մշակութային ցեղասպանութեան գծով մասնագէտ-պատմաբաններ Հայաստանի Հանրապետութիւնից, Ամերիկայի Միացեալ Նահանգներից, Մեծ Բրիտանիայից, Հունգարիայից, Գերմանիայից եւ Հոլանդայից:

Ապրիլի 23-ին Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի ժամանակաւոր ցուցադրութիւնների սրահում բացուելու է «Հայոց ցեղասպանութիւնը մամուլի առաջին էջերին» խորագրով ցուցադրութիւն, որում ընդգրկուելու են վերջին տարիներին թանգարանի կողմից իրականացուած հաւաքական աշխատանքների արդիւնքում ձեռք բերուած օտարալեզու բացառիկ հնատիպ ու ժամանակակից պարբերականներ, որոնց առաջին էջերին անդրադարձ է եղել հայկական կոտորածների թեմային: Այս ցուցադրութիւնը նմանատիպ բովանդակութեամբ առաջին ցուցադրութիւնն է:

Ապրիլի 23-ին Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտը թանգարանային մշտական ցուցադրութեան ցուցասրահներից մէկում ներկայացնելու է վերջին երկու տարիների ընթացքում թանգարանի հաւաքչական աշխատանքների արդիւնքում ձեռք բերուած առաւել արժէքաւոր թանգարանային միաւորներն ու վաւերագրերը: Ցուցադրութեան մէջ ներառուելու են փաստաթղթեր, լուսանկարներ, միջազգային հայանպաստ շարժմանը վերաբերող նիւթեր եւ այլ վաւերագրեր:

2010թ. Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտը սահմանելու է Ռաֆայէլ Լեմկինի անուանական կրթաթոշակ, որը հնարաւորութիւն է ընձեռելու արտասահմանեան ուսանողներին եւ ասպիրանտներին մէկ ամիս անցկացնելու Հայաստանի Հանրապետութեան գիտական հաստատութիւններում ու գրադարաններում հայոց ցեղասպանութեան գծով մասնագիտանալու համար:

Հայոց ցեղասպանութեան 95-րդ տարելիցի առիթով ՀՑԹԻ-ն հրատարակութեան է պատրաստել մէկ տասնեակ արժէքաւոր մենագրութիւններ հայերէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով: Այդ հրատարակութիւնների շարքում կարեւոր են շուէյցարացի յայտնի միսիոներ Յակոբ Կիւնցլերի «Արեան եւ արցունքների երկրում» յուշագրութեան հայերէն տպագրութիւնը, իտալական դիւանագիտական փաստաթղթերի ժողովածուի երկրորդ հատորը, Բրեզոլի «Այստեղով թուրքերն են անցել...» ֆրանսերէն հատորի հրատարակութիւնը նուիրուած կիլիկեան կոտորածներին, ինչպէս նաեւ Ֆերիման Դաքետի «Երիտասարդ թուրքերը եւ Հոլոքոստը Ատանայում» հազուագիւտ հատորեակի վերահրատարակումը, որն առաջին անգամ լոյս է տեսել Լոնտոնում, 1913 թ., ինչպէս նաեւ ՀՑԹԻ կողմից թողարկուող պարբերական հրատարակութեան՝ «Հայոց ցեղասպանութեան պատմութեան եւ պատմագրութեան հարցեր» ժողովածուի 16-րդ եւ 17-րդ հատորները:



ԿԼԵՆՏԷՅԼ
2010 ԱՄՆ-Ի
Մարդահամարը
մեր ձեռքերում մէջն է
YOU Count
In Glendale!
2010-ի մարդահամարի
հարցարանը ձեզի հասած
պէտք է ըլլայ: Ապահով է:
Ձեր պատասխանները
գաղտնի կը պահուին:
Եթէ կարիքի հարկ զգաք՝
հանեցէք այցելեցէք
մեր կայքէջը
կամ հեռախօսել հետեւեալ թիւին
Glendalecensus.org 1-818-937-8350

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# «ՀԱՅՐԵՆԻՔ» ՄԻՈՒԹԵԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Անցնող շաբաթավերջի ուշագրաւ ձեռնարկներէն մին էր «Հայրենիք» Միութեան տարեկան ճաշկերոյթ-պարահանդէսը, որ տեղի ունեցաւ Շաբաթ 27 Մարտ, 2010, Մոնթեպելլոյի «Բաղրամեան» գեղազարդ սրահին մէջ:

Աւելի քան 400 հոգի ներկայ գտնուեցան սոյն միջոցառումին: Հրաւիրեալներու մէջ կը նշմարուէին Հայաստանի Գուգարաց շրջանի առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Չուլճեան, Արեւմտեան Թեմի նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, տարբեր թեմերու եկեղեցականներ, Մոնթեպելլոյի քաղաքապետ Ուիլլիամ Մօլինարին ինչպէս նաեւ Պոլսահայ, Իրաքահայ, Իրանահայ եւ այլ կազմակերպութեանց ներկայացուցիչներ, բարերարներ եւ անդամ-անդամուհիներ: Ուշագրաւ էր Միութեան Երիտասարդաց Բաժանմունքի աշխոյժ ներկայութիւնը:



Ամերիկայի եւ Հայաստանի զոյգ քայլերգներու յոտնկայս ունկնդրութենէն ետք սեղաններու օրհնութիւնը կատարեց Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան:

Օրուան հանդիսավարն էր Յակոբ Ծերունեան որ ձեռնհասօրէն կատարեց իրեն վստահուած պաշտօնը: Ան կազմակերպիչ Յանձնախումբի անունով ողջունեց «Հայրենիք» Միութեան 18րդ տարեկան ճաշկերոյթ-պարահանդէսի մասնակիցները, որոնք եկած էին քաջալերելու այս հայրենանուէր կազմակերպութեան օգտաշատ գործունէութիւնը: Այնուհետեւ ներկաները սրահի տարբեր պատերուն վրայ զետեղուած պաստառներու վրայով դիտեցին տեսաերիզ մը, որուն մէջ կը տեղեկացուէր «Հայրենիք» Միութեան գործունէութեան տարբեր բնագաւառները Հայաստանի եւ Ղարաբաղի մէջ: Առանձնապէս հետաքրքրական էին Քարեգահ գիւղի մէջ կատարուած աշխատանքները, ջրմուղի եւ բնակելի տուներու վերաշինութիւնը, շտապ օգնութեան ինքնաշարժի նուէրը եւ այլն: Այս կապակցութեամբ սեղաններու վրայ դրուած էին յայտագիր գրքոյկներ, որոնց մէջ առաւել մանրամասնօրէն տեղեկացուած էին «Հայրենիք» Միութեան անցնող 18 տարիներու Մայր Հայրենիքին կատարուած բազմապիսի բարեսիրական օժանդակութիւններն ու գործադրուած բլանները:

Երեկոյթին ողջոյնի խօսքով հանդէս եկաւ հիւրաբար քաղաքս գտնուող Հայաստանի Գուգարաց Թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Չուլճեան, որ միաժամանակ Թուրքիոյ Հայոց Աթոռակից Պատրիարքի ընտրութեան երեք թեկնածուներէն մին է: Սրբազանը իր ելոյթին մէջ բարձր գնահատեց «Հայրենիք» Միութեան ազգանուէր ու հայրենանուէր անշահախնդիր ծառայութիւնները որոնք իրենց դրական անդրադարձը կ'ունենան Հայաստանի տարբեր շրջաններու մեր կարիքաւոր հայրենակիցներուն, ի մասնաւորի սահմանամերձ շրջաններուն համար: Ան կոչ ուղղեց չի գլանալ մեր շարունակական օժանդակութիւնները ի սպաս Մայր Հայրենիքի վերելքին: Սրբազանն այնուհետեւ պարգեւատրուեցաւ «Հայրենիք» Միութեան ոսկէմետալով, արժանանալով բուռն ծափահարութիւններու:



Համադամ ճաշերու եւ աղանդերներու սպասարկութենէն ետք գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր մը, որու ընթացքին ներկայացուեցան լատինական ամերիկային կարգ մը դասական եւ ժամանակակից պարերը, կատարողութեամբ «Մաթատօր» համոյթին:

Ուրախ երեկոն շարունակուեցաւ մինչեւ ուշ գիշեր պարահարթակն զբաղեցնելով հայկական եւ արեւմտեան պարերով: Մէջ ընդ մէջ տեղի կ'ունենային սրտաբուխ նուիրատուութիւններ «Հայրենիք»ի ֆոնտին: Բազմաթիւ ներկաներ բախտաւորուեցան վիճակահանութեան պարգեւներով:

Հաճելի եւ օգտակար միջոցառում մը արդարեւ:

# ՄԵՐՏԻՆԵԱՆ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ

Անխախտ հաւատք՝ ազգօգուտ ծրագրի մը իրականացման ի խնդիր եւ անսահման նուիրում ու ծառայութիւն այդ ծրագրի գոյատեւման համար: Ահա այս նուիրական զգացումներն են որոնք 28 տարիներէ ի վեր կանգուն կը պահեն Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանը: Սկսած 13 աշակերտներով եւ մէկ դասարանով, այսօր ան ունի Մանկամսուրէն մինչեւ Միջնակարգի 8-րդ կարգ, ուսումնական բարձր մակարդակ, 12 տարիներէ ի վեր վարկաւորուած է WASC-ի կողմէ եւ վերջապէս կը վայելէ Գալիֆորնիոյ Հայ գաղութի յարգանքն ու գնահատանքը:

Նուիրումի եւ ծառայութեան կենդանի օրինակ մըն էր վարժարանի հոգաբարձութեան 28-րդ տարեկան ճաշկերոյթ ձեռնարկը՝ որ տեղի ունեցաւ Մարտ 7, 2010-ին, Կլենտէյլի Փալատիօ սրահին մէջ:

Ձեռնարկին ներկայ էին Հայ Աւետ. Եկեղեցիներու Խորհուրդի վարիչ տնօրէն՝ Վեր. Դոկտ. Վահան Թութիկեան, Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետ. Միութեան Հովիւ՝ Վեր. Ժօզէֆ Մաթոսեան, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան վարիչ տնօրէն՝ պրն. Լեւոն Ֆիլեան, Տ. Կոմիտաս Քհնյ. Թորոսեան, որ կը ներկայացնէր Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանը, նախկին տնօրէններ՝ պրն. Արամ Պուլղուրճեանը եւ պրն. Գաբրիէլ Ինճէճիկեանը, Կիլիկիա Հայ Աւետ. Եկեղեցւոյ Հովիւ՝ Վեր. Գէորգ Դերեանը, Միացեալ Հայ Աւետ. Եկեղեցւոյ Հովիւ՝ Վեր. Ճէյսըն Մաթոսեանը, երկար տարիներէ ի վեր վարժարանիս թիկունք կանգնող իրաւաբան Ճորճ Ֆիլիփս, Տիկ. Անահիս Տէրեան, պրն. Ճէրի Թորբէնճեան եւ ուրիշներ:

Բարի գալուստի խօսքերով ելոյթ ունեցաւ հոգաբարձութեան ատենապետ՝ տօքթ. Հրայր Աթիկեան, ան իր շնորհակալութիւնը յայտնեց ճաշկերոյթը կազմակերպող Տիկնանց Օժանդակ Մարմնին եւ բոլոր ներկաներուն, ապա նշեց վարժարանի հետզհետէ աճող կարիքները, բայց մանաւանդ նոր շէնքի մը կառուցման հրամակայականը, եւ խօսքը վերջացուց հետեւեալ մէջբերումով՝ «ինչ որ կ'ընես քեզի համար՝ կը մ եռնի քեզի հետ, իսկ ինչ որ կ'ընես ուրիշին համար՝ կ'ապրի յաւիտեան»:

Երեկոյին պաշտօնական բացումը կատարեց օրուան հանդիսավարը՝ վարժարանիս ծնողներէն՝ իրաւաբան պրն. Աբրահամ Աթթէօքքնեանը: Ան իր երախտագիտութիւնը յայտնեց Մերտինեան Վարժարանի տարած նուիրական աշխատանքին համար, անոր մաղթելով առաւել յաջողութիւններ ու վերելք, միաժամանակ յիշեցնելով ներկաներուն, որ իրենցմէ իւրաքանչիւրին սրտի պարտքը պէտք է ըլլայ սատարել անոր բարօրութեան:



Վեր. Գէորգ Դերեանի աղօթքէն ետք բեմ հրաւիրուեցաւ տօքթ. Սթիւըն Ահարոնեանը՝ փոխանցելու Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան խօսքը: Ան բարձ գնահատեց Մերտինեան վարժարանի առաքելութիւնը, անոր հաստատաքայլ ընթացքը եւ աւելցուց՝ «Մենք ու Մերտինեան վարժարանը գործակիցներ ենք», մեծ հրճուանք եւ վստահութիւն ներշնչելով հաստատութեան ծաղկումին ի խնդիր աշխատող կամաւորներու ստուար խումբին:

Ապա ներկաները մեծ հաճոյքով ունկնդրեցին ազգային-ժողովրդական երգերու փունջ մը, կատարողութեամբ անուանի եր-

Շար.ը էջ 19

Armannie's Cuisine
Sandwiches & Catering
Fresh Bread • Manaesh • Lahmajune • Cookies
Cheese Buereg • Tahini Spinach Buereg • Spinach Buereg
(626) 797-9022
2379 E. Washington Blvd., Pasadena, CA 91104
Monday - Saturday 7:00am - 5:00pm
CATERING FOR ALL OCCASIONS
Business Hours: Monday - Friday 7am - 7pm
Saturday 7am - 3pm

# Massis Weekly

**Volume 30, No. 11** **Saturday, APRIL 03, 2010**


## Mediators Report Armenian Objections To New Karabakh Plan



**U.S., Russian and French co-chairs of OSCE Minsk Group**

YEREVAN -- International mediators said over the weekend that Armenia disagrees with some provisions of their recently modified plan to resolve the Nagorno-Karabakh conflict.

The U.S., Russian and French diplomats co-chairing the OSCE Minsk Group met with Karabakh Armenian leaders late on Saturday before heading back to Yerevan for talks with President Serzh Sarkisian and Foreign Minister Edward Nalbandian held on Monday evening. Official Armenian sources gave no details of the talks.

They focused on what the mediators call an "updated version" of their basic principles of Karabakh peace. Armenia has so far declined to publicly clarify its response to the still unpublicized changes made in the so-called Madrid document.

Yuri Merzlyakov, the group's Russian co-chair, described those changes as "proposals on the principles not agreed upon on" which he said were presented to the conflicting parties "in some new formulations." He refused to elaborate. "We did not discuss concrete formulations," Merzlyakov told reporters after the Yerevan talks.

The Armenian Foreign Ministry, for its part, quoted Nalbandian as telling the co-chairs that Yerevan continues to regard the Madrid principles as "the basis for negotiations."

Speaking to journalists in Stepanakert the previous day, Merzlyakov said Yerevan has voiced a number of objections to the modified proposals. He declined to specify them.

"But we are not dramatizing the

**Continued on page 4**

## Armenian Poll Shows Weak Popular Support For Turkey Ties

YEREVAN -- Only one in three Armenians supports Armenia's fence-mending agreements with Turkey and the possible opening of the border between the two estranged nations, according to an opinion poll released on Monday.

The poll conducted by the Armenian Marketing Association (AMA) appears to be the most comprehensive survey yet of Armenian public opinion on the dramatic thaw in Turkish-Armenian relations. The non-governmental group interviewed some 2,500 randomly chosen residents across the country in late January and early February.

The survey, which the AMA says was not financed or commissioned by any other organization, found not only a lack of popular support for the Western-backed rapprochement but also a large number of Armenians undecided about its various aspects and implications.

"Many people are confused, they don't know whom to believe," the AMA chairman, Aram Navasardian, told RFE/RL's Armenian service. He said the confusion stems from diametrically opposite assessments of the process made by the Armenian government and its political opponents.

According to the AMA, nearly 31 percent of respondents supported, to varying degrees, the increased diplomatic, civil-society and other contacts between Armenia and Turkey. Almost the same percentage of those polled fully or largely opposed such contacts, with the remaining 40 percent either undecided or having no definite opinion.

Accordingly, only 36.3 percent of respondents said the normalization protocols signed by Ankara and Yerevan last October are good for Armenia. Most of the others were either undecided or said the protocols favor only the Turkish side.

The AMA poll suggests that public opinion is almost evenly split on the opening of the Turkish-Armenian border, which is envisaged by the protocols. It shows that only one-third of Armenians want to have an open border with Turkey while those who are firmly or mostly against make up just over 30 percent of the population.

Navasardian stressed that AMA pollsters did not seek to identify reasons for the popular attitudes towards Armenia's relations with Turkey and the controversial protocols in particular. He said that should be the subject of a separate study.

## Turkey Claims Clinton Pledge On Genocide Resolution

WASHINGTON, DC/ANKARA (Reuters) -- U.S. Secretary of State Hillary Clinton has assured Turkey the White House opposes the congressional resolution on the Armenian Genocide, the Turkish Foreign Ministry said on Monday.

The ministry issued the statement after a telephone call between Clinton and Foreign Minister Ahmet Davutoglu on Sunday.

"Secretary Clinton emphasized that the U.S. administration opposes both the decision accepted by the committee and the decision reaching the general assembly," the statement said.

Turkey wants to be sure that Obama will not use the term genocide in an address scheduled for April 24, and has halted high profile visits by officials. Davutoglu told Clinton the congressional committee's resolution had negatively affected efforts to improved stability in the South Caucasus.

Clinton said U.S. officials hoped Prime Minister Tayyip Erdogan would attend a summit in Washington next month on nuclear disarmament, the foreign ministry statement said. Davutoglu said Erdogan would decide in the next few days whether to attend the meeting on April 13 and 14. More than 40 world leaders are expected at the summit.

### An Appeal to the Armenian People Heading to the Genocide Memorial Statue of Montebello On April 24

**Communique No 2**

The First Genocide of the 20th Century inhumanly organized, plotted and executed by Turkey 95 years ago, still remains unpunished. Today, the Armenian people are determined more than ever to demand their rights from Turkey.

Political developments of recent months, especially what refers to the Armenia-Turkey border opening and the Protocols, are nothing more than an effort by Turkey to obscure our real pain: the Genocide.

Today, Armenians are facing difficult challenges. Our people are under tremendous pressure in the process of regulating Armenia-Turkey relations and resolving the Artsakh conflict.

On these days and especially with recent developments, our people will come together as one and remind the whole world that Turkey is liable to us and has to return our lands and make financial compensations. The Armenian people will never stop fighting for their rights.

Hence, we appeal to each and every Armenian in Southern California to

**Continued on page 4**

## Armenian Woman Among Moscow Terrorist Bombing Victims

MOSCOW -- A teenage Armenian woman was among 39 people killed in twin suicide bombings on Moscow's underground railway, the Armenian Foreign Ministry said on Tuesday.

The explosions, which authorities said were set off by female suicide bombers linked to Islamist militants from the North Caucasus, ripped through two metro stations in the city center during the Monday morning rush hour.

Thirty-eight people were initially reported killed and more than 70 others seriously wounded in what was the deadliest attack on the Russian capital in six years. A 17-year-old woman, identified as Valentina Yegiazarian, died of severe injuries in hospital on Tuesday, bringing the death toll to 39.

Armenian Foreign Ministry spokesman Tigran Balayan confirmed her ethnic Armenian origin. "Unfortunately, there is an Armenian victim who died in hospital today: the 17-year-old Valentina Yegiazarian," he told RFE/RL's Armenian service.

Balayan said two other Russian citizens of Armenian descent, both of them women, were also injured in the blasts and required hospitalization. Doctors says their condition is "satisfactory," he added.

Russia's Prime Minister Vladimir Putin said the culprits must be scraped "from the bottom of the sewers" and exposed as Moscow observed an official day of mourning on Tuesday. Flags across the city flew at half-mast and somber Muscovites laid flowers and lit candles at the stations hit by the blasts.

**British House of Lords Discussed Armenian Genocide -Page 2-**

# House of Lords Discussed Armenian Genocide

## Baroness Caroline Cox: Genocide Negation Policy Jeopardizes Whole World

The necessity of Armenian Genocide recognition internationally is long overdue, considering its 95th anniversary this year, said Baroness Caroline Cox on Monday in the House of Lords.

According to her, currently Turkish government denies the fact of massacres of innumerous Armenians committed in Ottoman Empire in the beginning of last century, which a dishonest refusal of historical truth. In spring 1915, the deportation of Armenians separated men from families, who got shot later in a desert area. Turkish policy of deportation, extermination and massacres of Armenians is inconvertible. Consequence of Genocide denial is impunity, having destructing the Armenian civilization in culture, including in NKR territory by Azerbaijanis. There was an obvious ethnic cleansing. Each year visiting Genocide memorial all Armenians commemorate their victims. The genocide denial policy jeopardizes the whole world, Baroness Cox underlined.

One of the lords recalled that the Armenian Genocide issue was widely discussed by Turkish writers. He reckons that Hrant Dink's assassination proves the prosecution and persecution of Armenians even in modern Turkey. Turkey exerts political pressure on media after the Armenian genocide recognition by the U.S House Committee and Swedish Parliament. Minister Erdogan being on official visit in UK this month, opposed the voting, threatening to deport 100.000 Armenians from Turkey. I urge Minister Erdogan to open dialogue on 1915 events starting with "Blue Book" and try to overcome the hostility of 100 years and join us with Turkish Grand National Assembly again, he added.

Another official stated that in 1915 Turkish government planned and organized massacres which were a final solution to Armenia-Turkey relations, and its end seems to be compelling. If Turkey could apology to Armenian government for prosecution and persecution of historical writers presenting the truth of terrible events that took place. Continuance of denial of what happened began between Turkey and Armenia, diverts attention from urgent constitutional reforms, that many Europeans consider necessary within Turkey and its application for EU membership.

The opinion also against the genocide was voiced as well. One of Lords said that it would be much more relevant instead of self-indulging of what happened 100 years ago in Ottoman Empire to settle the issue. There is no reason or excuse of defending either side, but from my reading I believe Armenian-Russian attempts provoked the conflict, that actually resulted in killing of a large number of people in harsh circumstances. UK should remember 1922 — Kemal Ataturk, ally of UK and we are grateful for Turkish participation in guarding freedom of Europe. For that reason I believe we should be very careful not to alienate our Turkish ally, considering that US congressional committee only voted by majority in favour of the resolution.

Anther UK official emphasized that Armenian population was annihilated in the most cruel and barbaric way, it was a crime against humanity and Armenian people. These events cannot be forgotten, but they have to move forward – Armenians and Turks should live for a better chance and future. They initiated diplomatic Protocols on reconciliation for the first time in the history and the investigation of events of the past. But process stalled despite pressure from the US. Neither parliament has yet approved the Protocols, Armenian President Sargsyan said that Armenian Parliament will ratify the Protocols as soon as Turkey does so. Within this limited success Erdogan threatens to deport 100.000 illegal Armenians from the country. Can Baroness tell what discussions are made between their governments to ease this tension? Widely accepted that prospects of Turkey's EU membership will force to change in a constructive way and examine its past in his area, she concluded.

The Minister of State, Foreign and Commonwealth Office Baroness Kinnock of Holyhead thanked Baroness Cox for initiating debates. She noted that British deeply regret the deaths of hundreds of thousands of Armenians who were either killed by Ottoman troops or died from starvation or disease at the beginning of the previous century. She stated that the victims of such suffering should not be forgotten. However, she added that UK Government will not make any statements that have the potential to jeopardize the Armenia-Turkey reconciliation process.

The debates in the House of Lords were initiated based on Baroness Caroline Cox's proposal.

# Living in a Different Turkey: Sirinoglu Conciliatory Comments Spark Anger Among Istanbul Armenians

**By Siranuysh Gevorgyan**
**ArmeniaNow.com**

A recent apology of an affluent ethnic Armenian businessman in Istanbul to Turkey's premier over a misstated figure of illegal Armenian migrants as well as his further controversial comments about the nature of Ottoman-era mass killings of Armenians - that he said need not be called a genocide - have sparked a wave of protest among local Armenians, who say the man was not entitled to speak on their behalf.

Angered Armenians of Istanbul launched an online collection of signatures against Petros Sirinoglu under the slogan of "We Live in a Different Turkey". So far the campaign has attracted nearly 220 signatures.

"If Sirinoglu says that Armenians in Turkey live in security, then we live in a different Turkey. Armenians in this country are subjected to nationalist attacks and discrimination on ethnic grounds. Armenians serve for Turkey as an object of trade and bargaining in international relations. We had expected Sirinoglu to remind Erdogan that no real steps were being made to disclose the murder of [Turkish-Armenian journalist and minority rights champion] Hrant Dink who was slain three years ago. Sirinoglu described the 1915 events as a dispute between

Continued on page 4

# Turkish EU Minister on the Armenian Genocide Denial

## 'We Are Very Sensitive About This Issue'

**In a SPIEGEL interview, Ankara's Minister for European Affairs Egemen Bagis discusses Turkey's journey to the West and his country's dispute with the United States over a resolution on the genocide of the Armenians recently passed by Congress.**

**Here is the part of the interview dealing with Armenian issues.**

**SPIEGEL: Atatürk, the founder of modern Turkey, said: "The Turks have only ever gone in one direction — towards the West."**

Bagis: And that is still true. But at the same time, we are also a bridge and have four strong pillars, one in each direction ...

**SPIEGEL: ... of which you recently pulled out two by recalling your ambassadors to the United States and Sweden. The move was triggered by the decision of a Congressional committee to pass a resolution recognizing the death of more than a million Armenians in 1915-16 as genocide. A similar resolution was passed by Sweden's parliament.**

Bagis: With this decision, Sweden has become slave to a thesis that, unfortunately, is based on falsehoods. The voting in the US on the so-called genocide was a success for Turkey. The Congressman from California,



who got support from the Armenian lobby, made a fool out of himself. He tried to scratch the back of every Representative in the corridors of Congress in order to get their vote. But then he only won by a single vote.

**SPIEGEL: Still, a Congressional committee approved the resolution.**

Bagis: Secretary of State Hillary Clinton later declared that the resolution will not be passed by the entire House of Representatives. As you know, the French parliament passed a similar law on the so-called Armenian genocide in 2006. Afterwards there was a ban on French airforce flights over Turkey. We are very sensitive about this issue.

**SPIEGEL: What options do you have if the Americans do, in the end, recognize the genocide officially? Would you want to close the Incirlik airbase? Leave NATO?**

Bagis: I will leave that up to your readers' imagination. But allow me to remind you of one thing: Seventy percent of the logistical support for the Iraq deployment comes through Incirlik.

**SPIEGEL: Why is it so difficult for Turkey to recognize the genocide of the Armenians?**

Bagis: It is up to the historians, not politicians, to judge what happened in the past. Politicians look into the future. We have offered to create a joint commission of historians together with the Republic of Armenia — so far without success. Besides, you should know that the Ottoman Empire was an ally of the German Reich. Nothing that happened back then happened without consultations with the Germans.

**SPIEGEL: If you dont accept the word "genocide," then how can you have a "Genocide Museum" in the city of Igdir in eastern Turkey, dedicated to the Turks who died in 1915?**

Bagis: That's very easy: Every action leads to a reaction. But I don't want to rule out the possibility that, someday, this museum could be transformed into a "Museum of Coexistance" or a "Museum of Mutual Pain." I do not want to deny that the Armenians went through very difficult times ...

**SPIEGEL: You call it "difficult times"? We are taking about 1.5 million Armenians who perished between 1915 and 1917.**

Bagis: According to American historian Justin McCarthy, 600,000 Armenians died at the time — and at the same time, 2 million Kurds and Turks. There was a civil war in Turkey, right in the middle of World War I.

**SPIEGEL: The interior minister at that time, Talat Pascha, told the then US ambassador, Henry Morgenthau, that the "physical extermination" of the Amernians was a necessary goal of the war.**

Bagis: According to McCarthy, this quote isn't entirely accurate. But I am not a historian. I wasn't there, you weren't there. Why don't we leave this question to a mutual commission of historians comprised of Armenians and Turks?

**SPIEGEL: There was a time when Turkey seemed further along the road toward confronting its past. In 1919, the three men mainly re-**

Continued on page 4

## New Book on Armenian Genocide "Exile, Trauma and Death: On the Road to Chankiri with Komitas Vartabed" By Aram Andonian

**Aram Andonian, Exile, Trauma and Death: On the Road to Chankiri with Komitas Vartabed, (transl, ed and annot by Dr. Rita Soulahian Kuyumjian), a joint publication of the Gomidas Institute and Tekeyan Cultural Association,**

**200 pp, maps, photos, ISBN 9781903656921, pb. GB£16.00 / US$22.00.**

**Available worldwide. Simply contact books@gomidas.org**




Aram Andonian is best known as the author of The Memoirs of Naim Bey, which included purported copies of Talaat pasha's telegrams ordering the destruction of Armenians. Less known is Andonian's personal account of the arrest of Armenians on 24 April 1915. He himself was one of the people arrested and sent into exile. However, unlike most other prisoners, he was lucky and survived his ordeal to bear witness to what had happened to others.

Between December 1946 and June 1947, on the occassion of the 75th anniversary of Komitas Vartabed's birth, Aram Andonian wrote his memoirs of the April 24. His extensive account was serialised in Arevmoudk (Paris) in 24 articles. This memoir is the most detailed account we have of those fateful days.

Andonian's account, which included details about the arrest and exile of Komitas Vartabed, were left in the pages fo Arevmoudk and all but forgotten. However, a recently published book by Dr. Rita Soulahian Kuyumjian, has brought Andonian's memoirs back to light in an English translation. This work is part of a trilogy of books by Dr. Soulahian Kuyumjian dedicated to the intellectual losses of Armenians on 24 April 1915.

"Exile, Trauma and Death: On the Road to Chankiri with Komitas Vartabed" gives a blow-by-blow account of the first days of the mass arrests of Armenains and sheds light on the fates of many famous Armenians, including Taniel Varoujan, Roupen Sevag, Siamanto, as well as Komitas Vartabed and others.

Andonians writes in a lucid style, with great detail, clarity, and much black humour. He captures the sense of indignity and terror that surrounds the prisoners. Andonian knows what will happen to most of the people he mentions, many of whom were his personal friends.

Dr. Soulahian Kuyumjian's translation thus opens a new window into the darkest chapters of modern Armenian history. "Exile, Trauma and Death: On the Road to Chankiri with Komitas Vartabed" is a monumental work that should be read by all interested in the 1915 genocide of Armenians.

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան
տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկանաք զանոնք
նուիրել
Կայծ Երիտասարդական
Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել
մեզի հետ:
**G.Y.O. 1060 N. ALLEN AVE.**
**PASADENA, CA 91104**
**Norserount@sbcglobal.net**

## Book Review

## Prolific Minister Publishes His 32nd Book

**Challenges and Responses. By Rev. Dr. Vahan H. Tootikian. Armenian Heritage Committee, 3922 Yorba Linda Blvd., Royal Oak, MI 48073. 158 pages. Hard cover. $20.00.**

**By Rosemary Russell Boze**

"Life is a fearful adventure," writes Dr. Tootikian in this his 32nd volume, an adventure where we are met with challenges that require "proper responses." But how do we make "right choices"? By using challenges as "stepping stones," not by making excuses for "stumbling blocks" that hold us back. And if we place our faith in God, then we will learn to see challenges as opportunities, even "in the most hopeless situations."

With this introduction, Tootikian sets out to present examples of challenges and responses in three parts: 1. *Observances and Observations; 2. Views on Issues; 3. As I See It.*

Part one of *Challenges and Responses* contains provoking essays on church and federal holidays, including two lesser known celebrations: Festival of the Christian Home and World Wide Communion Sunday. Tootikian also ponders two observances reflecting his own rich Armenian heritage: Feast of the Holy Translators and an essay written to commemorate the 100th anniversary of the Kessab Educational Association, *We the Kessabtzis.*

Part two begins with an acknowledgement that "We live in an ever-changing world. It is shifting with alarming speed." No one would take issue with that statement, but it becomes startling when coupled with statistics. For example, Tootikian writes: "It has been estimated that 70 percent of everything printed today is destroyed within 90 days." Of all those publications that come and go—including best sellers—it is the Bible and the values and teaching contained therein that remain immutable in the face of rapid change. Readers at first alarmed will find reassurance in God's

**Continued on page 4**



## April 24 Events at Fresno State

Dr. Bedross Der Matossian (MIT) and Dr. Levon Marashlian (Glendale Community College) will be guest speakers at a special Armenian Genocide Commemorative event at 7:30PM on Friday, April 16, in the University Business Center, Room 191, Alice Peters Auditorium, on the Fresno State campus. The Armenian Studies Program and Armenian Students Organization at Fresno State are sponsoring the presentations.

Dr. Der Bedrossian will speak on "The Taboo within the Taboo: The Fate of the 'Armenian Capital' in the End of the Ottoman Empire." One of the marginalized topics in the historiography of the Ottoman Empire in general and that of the Armenian Genocide in particular is the fate of the "Armenian economy" during World War I. Der Matossian examines or questions the fate of the "Armenian capital" in the Empire.

Dr. Der Matossian is a lecturer in history at the Massachusetts Institute of Technology. He is a graduate of the Hebrew University of Jerusalem, where he began his graduate studies in the Department of Islamic and Middle Eastern Studies. He completed his Ph.D. in Middle East History in the Department of Middle East and Asian Languages and Cultures at Columbia University in 2008.

Dr. Marashlian will speak on "Problems With Denial and Denying With the Armenian-Turkish Protocols. "The interrelationship between Turkey's problems with denying the Armenian Genocide and Turkey's motivations for negotiating the Armenian-Turkish Protocols is the focus of this lecture.

## An Appeal to the Armenian People

**Continued from page 1**

participate in the upcoming event on April 24, 1.30pm at the Genocide Memorial Statue of Montebello and demonstrate to the world our determination to demand for justice. On that day representatives of all community organizations and religious leaders will come together for a political gathering which will be followed by a memorial service.

During the political portion of the event community leaders as well as Local, State and Federal representatives will address this gathering.

As a token of our respect, we also appeal to our people to place flowers at the Genocide Memorial Statue.

The address is : **Bincell Park**
**900 Via San Clemente**
**Montebello, California**

Transportations will be available from different areas. Please follow our upcoming press releases for further information.

**Armenian Genocide 95th year Commemorative Committee**

## Armenian Objections To New Karabakh Plan

**Continued from page 1**

situation at all because two years ago the situation with the Madrid document was the same, with the Armenian side claiming to accept it — not fully, as it is turning out now — and the Azerbaijani side not accepting it," the Russian diplomat said. "We then worked hard with [Azerbaijan] to reach a common denominator when both sides seemed to back those Madrid principles with the exception of four outstanding issues which we continued to discuss and which necessitated what you call renewed proposals."

His French opposite number, Bernard Fassier, also tried to put an optimistic spin on the negotiating process. "There areas of mutual understanding," he said.

Azerbaijani Foreign Minister Elmar Mammadyarov has said that the updated Madrid document is acceptable to Baku "with a number of exceptions" and that further progress in the talks hinges on its acceptance by the Armenian side.

Nalbandian dismissed these statements as misleading on March 18, saying that the Azerbaijani "exceptions" outweigh provisions acceptable to Baku. He accused Baku of seeking to "distort essence of the negotiating process."

## Prolific Minister Publishes His 32nd Book

**Continued from page 3**

steady, omniscient hand.

In his last section, Tootikian broaches a broad spectrum of practical subjects that receive due attention. He puts out a clarion call for good leaders. "Adequacy, not perfection," he writes, is "usually what is needed." These last several chapters challenge us to be good stewards of natural resources, to strive for unity, and to rely on faith in God during times when we encounter the questions whose answers we cannot know as finite beings.

Minister, educator, administrator, prolific writer and community leader, the Rev. Dr. Vahan H. Tootikian in this latest volume, as always, addresses complex, relevant matters with wisdom, anecdotes, statistics and the Word of God.

**Rosemary Russell Boze is an educator and community activist from Winona Lake, Indiana**

## Living in a Different Turkey

**Continued from page 2**

two friends. We condemn this statement by Sirinoglu in which he tried to cover up and mitigate the heavy crime committed against humanity," reads the statement issued by the Armenians of Istanbul.

Erdogan had invited Sirinoglu to a meeting after his recent controversial threats to expel illegal Armenian migrants from his country. The comments made by the Turkish leader in a BBC interview while he was on a trip to London earlier this month infuriated international human rights groups and were battered by international media that branded it as racist. Some analysts say the move to hold a meeting with an affluent representative of the Armenian community pursued the goal of mitigating the fallout of his controversial statement.

But the meeting with Sirinoglu, chairman of the Board of Trustees of the Armenian Holy Savior (Surb Prkich) Hospital of Istanbul, as it turned out later, only fueled the passions.

Sirinoglu, who introduced himself as leader of the Armenian community – which, however, has been disproved by the Turkish Armenians – offered an apology to Erdogan during the meeting, saying that in reality only 30,000 illegal Armenian migrants live in the country and that they had erroneously provided Erdogan with the wrong figure of 100,000.

And subsequently Sirinoglu also told the media: "Raising issues related to what happened a century ago will not lead to anything good. There is no need to dig the past, nor is there a need to call the events that happened genocide. There were victims on both sides, my grandfather died in 1915, however I do not understand why people continue discussions around this issue," said Sirinoglu.

In Yerevan, specialist in Turkish studies Artak Shakaryan describes the Erdogan-Sirinoglu meeting as a publicity stunt and says that, no doubt, Sirinoglu is not the leader of the Armenian community of Turkey.

"The leader of the community is the Armenian Patriarch of Constantinople, and [murdered] Hrant Dink was considered to be informal leader," says Shakaryan.

Shakaryan says that while Ankara is trying to show to the world this way that it maintains good relations with Armenians, it, in fact, has forced consolidation among the Armenians of Istanbul.

Another specialist in Turkish studies in Yerevan, Ruben Melkonyan, also reaffirms that "there is no leader of the Armenian community of Turkey other than the patriarch, and never was" and that with this meeting the Turkish political machinery is trying to mitigate the gross statement by the premier.

## 'We Are Very Sensitive About This Issue'

**Continued from page 2**

**sponsible for the Armenian genocide — Talat Pasha, Enver Pasha and Cemal Pasha — were all sentenced to death in absentia. Atatürk wanted nothing to do with them. Nevertheless, there are still three large, magnificent tombstones for these men in Istanbul.**

Bagis: It is traditional in our culture to commemorate the dead. Like all of us, these men surely did some good and some bad things in their lives and for their country.

**SPIEGEL: Is Turkey worried the Armenians will demand reparations?**

Bagis: You know, there are an estimated 100,000 illegal Armenian immigrants in our country, who work here providing care for the elderly and children. For me, this shows that there is no hate between our people. On the contrary: We are attempting to achieve rapprochement, there is a peace process between our countries …

**SPIEGEL: … which is stagnating at the moment.**

Bagis: That is not our fault. We have attempted to bridge our differences; we want to open all archives. But when you see that the other side is blocking all your attempts, it makes you skeptical.

**SPIEGEL: This issue represents one of the few on which the AKP government, the military and the secular elite are all on the same page. Doesn't that bother you?**

Bagis: No. My government focuses on solving problems. We want good neighborly relations, also with Armenia.

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA

ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.

**ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**

# ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՄԱՐԴՈՒ ՈԴԻՍԱԿԱՆԸ
## (ՅԵՏ ՄԱՀՈՒ ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԷՍ)

*Ռ. ԿՈՐԻՒՆ*

Հետաքրքրական ծրագրով գրքի շնորհանդէս էր հեղինակի՝ Երուանդ Կիւրեղեանի, ոչ կենդանութեան օրօք, հոծ թւով հանդիսականների ներկայութեամբ Գլենդէյլի հանրային գրադարանի դահլիճում, կիրակի Մարտի 21, 2010 թ. երեկոյեան ժամը 5-ին: Ի՜նչ զուգադիպութիւն, գար-նանամուտի առաջին օրը, երբ բնութիւնը վերընձիւղւում է թարմ ու գեղեցկատեսիլ բուսականութեամբ, ի՜նչ հոյակապ ու պատշաճ ընտրութիւն: Նոր եղանակ, նոր գիրք, որը պատմական նորութիւններ եւ տեղեկութիւններ պիտի փոխանցի ընթերցողներին:

Գիրքը խորագրուել է՝ «Իմ յուշերի ճանապարհով» 353 էջ, ստուարակազմ ընտիր տպագրութեամբ Երեւանում 2009 թ., խմբագրութեամբ եւ ծանօթագրութեամբ՝ Սերգէյ Վարդանեանի եւ Լուսինէ Սահակեանի, երեսակազմը պատկերուած է Սարդարապատի յուշակոթող վասպուրական նահանգի քարտէզով, իսկ միւս կողմը հեղինակի պատկերով կենսագրութիւնը կարեւոր թւականներով, գիրքն ընդգրկում է հարազատների, բարեկամների եւ հեղինակի զինակից ընկերների պատկերներ, երկու քարտէզներ, մէկը՝ ներկայացնում է հեղինակի անցած ռազմական ուղիները, իսկ միւսը՝ Վասպուրական նահանգի Հայոց Ձոր գաւառը:

Գիրքը հրատարակուել է հեղինակի զաւակների՝ Անժել Ալթունեանի եւ ճարտգ. Վարուժան Կիւրեղեանի կողմից եւ նուիրուել է իրենց ծնողների՝ Երուանդ եւ Վարդանուշ Կիւրեղեանների պայծառ յիշատակին:

Հանդիսութեան մեկնարկումը կատարեց դոկտ. Լաուրա Մելիքեանը «Արարատ Ֆանդէյշէն»-ի կողմից: Շնորհալի տիկինը որպէս հանդիսավար կուռ հայերէնով եւ գրաւիչ ձայնով ողջունեց ներկաներին, նեկայացրեց հանդիսութեան չարժառիթը, գրքի մասին տեղեկութիւններ փոխանցեց, ապա բեմ հրաւիրեց «Արարատ ռազմավարագիտական կենտրոն- Երեւան»-ի տնօրէն պատմաքաղաքագիտութեան դոկտ. պրոֆ. Արմէն Այւազեանին:

Դոկտ. Արմէն Այւազեանը ճանաչուած դէմք է թէ Հայաստանում եւ թէ Սփիւռքում, անգամներ ունկնդիրն ենք եղել այստեղ Լոս անջելէսում իր մասնագիտութեան առնչուող ելոյթներին՝ Հայաստանի եւ Արցախին վերաբերող քաղաքական իրադարձութիւնների շուրջ դիւանագիտական ոդեգրելիք դիրքորոշումներին կապւող թուրքիայի եւ ադրբեջանի հետ, նրա հեղինակած անգլերէնով եւ հայերէնով գրքերը մեզ լաւապէս ծանօթ են: Նա հակիրճ եւ բովանդակալից բացատրութիւններ տւեց «Իմ յուշերի ճանապարհով» գրքի ռազմագիտական տեսակէտից նրա արժէքի մասին եւ բարձրօրէն գնահատեց լուսահոգի Երւանդ Կիւրեղեանին, որ այսպիսի արժէ-քաւոր յուշեր է աւանդ թողել պատմաբանների համար այդ ժամանակների 20-րդ դարի սկիզբների դէմքերի, դէպքերի եւ իրադարձութիւնների մասին ականատեսի ու վկայողի աչքով տեսել եւ գրի է առել, յիշեցնելով որ շատ քիչերից է այսպիսի պատմական իմաստ ու բնոյթ կրող յուշապատում մեր ձեռքը հասել: Նա նոյնպէս գնահատեց գիտաշխատող Սերգէյ Վարդանեանին եւ դոկտ.Լուսինէ Սահակեանին, որոնք հանգուցեալի ձեռագիր տետրակները ինչ տքնաջան աշխատանքով սրբագրելուց, խմբագրելուց եւ ծանօթագրելուց յետոյ յանձնել են տպագրութեան: Դոկտ. Այվազեանի ելոյթը հանդիսականների կողմից գնահատւեց բուռն ծափերով:

Հանդիսավարի կողմից բեմ հրաւիրւեց հանգուցեալ հեղինակի դուստրը՝ Անժէլ Ալթունեանը: Նա ներկայացնելով իրենց ընտանիքից կենսագրական դրւագներ ի մասնաւորի երախտագիտութեամբ անդրադարձաւ իր հօր մասին, որը հայութեան համար քաջ զինւոր է եղել ծառայելով ազգին, թողնելով պատմութեան կարեւոր յուշագրութիւններ, ապա խորին շնորհակալութիւններ յայտնեց դոկտ. Արմէն Այւազեանին եւ գրքի խմբագիրներին, որոնք որեւէ ճիգ ու ջանք չեն խնայել որ արժէքաւոր գիրք հրատարակւի որպէս աղբիւր այդ ժամանակների պատմութիւնը ուսումնասիրողների համար, նա նաեւ շնորհակալութեան խօսք յայտնեց իր եղբօրը՝ Վարուժան Կիւրեղեանին հանդէսի կազմակերպման եւ գրքի հրատարակման գործում: Ապա մեր հանդիսավարը բեմ հրաւիրեց ԵՊՀ թրքագիտութեան ամբիոնի դոցենտ եւ օսմանագիտութեան կենտրոնի ղեկա-վար ՝ դոկտ. Լուսինէ Սահակեանին, գրքի խմբագիրներից մէկը:

Իր մասնագիտութեամբ հանրածանօթ դոկտ. Լուսինէն լայն տեղեկութիւններ ներկայացրեց հանգուցեալի գրքի 2-րդ հրատարակութեան մասին, որը կատարւել է տող առ տող եւ բառ առ բառ յուշատետրերի գրութիւնները մեկնաբանելով ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստուտի գիտաշխատող՝ Սերգէյ Վարդանեանի հետ միասին երկու տարի տեւողութեամբ իրականացնելով՝ խմբագրական, սրբագրական եւ ծանօթագրական աշխատանքները: Նա իր խօսքի մէջ ասաց՝ «Սա հայ մարդու ոդիսականն է, փոթորկայոյզ կեանքի պատմութիւն, գրել է մահից տասս տարի առաջ՝ հարիւր տարեկանում՝ 1988 թ., դա կեանքի դառնութիւնը տեսած անչար մարդու պատմութիւն է, որը շատ հաւաստի եւ կենդանի է, քան բազում գրագէտների կեղծ տւայտանքներն ու բառարաններից հանած բառակոյտերը: Հեղինակի որդու խնդրանքով յուշագրութիւնը տպագրում ենք նոյնութեամբ, խմբագրական նւազագոյն միջամտութեամբ «: Մի ուրիշ տեղում յարգելի Լուսինէն այսպէս է գնահատում գիրքը՝ » Յուշապատումը ընթերցւում է մեծ հետաքրքրութեամբ, եւ մեր ոչ հեռաւոր անցեալի շատ իրողութիւններ յառնում են նորովի, անծանօթ կողմերով եւ մանրամասներով, այսինքն՝ պատմութիւն կերտողներից մէկի կողմից»:

Դոկտ.Լուսինէի ներկայացրած բանախօսականը գրքի մասին հակիրճ տեղեկութիւններ փոխանցեց լսարանին, նաեւ ընդգծեց գրքի պատմագիտական ազգագրական արժէքը: Ցուցադրւեց դոկտ.Լուսինէ Սահակեանի պատրաստած ժա-

Շար.ը էջ 19

# ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆԻ ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀՆԱԴԻՍՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ ԹԱԳՈՒՀԻ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Գերաշնորհ Սրբազան Հայր
Մեծարգոյ Տէր եւ Տիկ. Պապայեաններ
Յարգարժան մշակութասէր հասարակութիւն

1955 թ. Հոկտեմբերի վերջերին Հայաստանի Հանրապետութեան Ալեքսանդր Սպենդիարեանի անուան օպերայի եւ բալետի ակադեմական թատրոնում մեծ տօնահանդէս էր: Ալեքսանդր Թամանեանի հանճարաւոր մտքի սլացքով վեր խոյացած սրահի կամարների տակ ասես տրոփում էր համայն հայութեան սիրտը, նշւում էր մեծ բանաստեղծ Աւետիք Իսահակեանի ծննդեան 80-ամեակը:

Ողջոյնի բազում խօսքերից յետոյ դանդաղ քայլերով ամբիոնին մօտեցաւ յոբելեարը եւ մեղմ ձայնով ասաց. «Մարդ չպիտի մտածէ աշխարհից բան տանելու մասին, այլ աշխարհում բան թողնելու մասին, մնացածը ունայնութիւն է: Ապա աւելացրեց «ես կը ցանկանայի, որ մեր ժողովուրդը պահպանէր, փայփայէր ու տէր կանգնէր մեր ազգային արժէքներին»:

Եւ ահա այսօր, մեր ժամանակների մեծագոյն մտաւորական, հմուտ, վաստակաշատ մանկավարժ, հասարակական գործիչ, մի շարք գրքերի հեղինակ, վառ անհատականութիւն մեծարգոյ Երուանդ Պապայեանը եւս պատգամ է թողնում մեր սերունդներին.

«Պէտք չէ մոռցուին գրականութեան եւ մշակոյթի մարզերու մեր երախտաւորները: Պէտք չէ մոռցուին յուշագրութիւնները Մեծ Եղեռնէն վերապրողներուս: Անոնց ստեղծագործութիւնները պէտք է փոխանցուին սերունդէ սերունդ, որպէս երախտիք հայ ժողովուրդի յաւերժութեան»:

Այո՛, հայի ոգին անշէջ է մնացել շնորհիւ հայ մտքի եւ հոգու արթուն սպասարկուների, որոնց միջոցով մենք պահպանել ենք մեր ազգային տեսակը հայրենի հողի վրայ եւ թէ սփիւռքում, ամրապնդել ենք հայոց ոգին, հայ մնալու կամքն ու վիճռականութիւնը:

Այդպիսի արթուն սպասարկուներից է մեր սիրելի Երուանդ Պապայեանը եւ մենք հպարտ ենք, որ նա մերն է, մեր ժողովրդի զաւակը, որպէս առաջադէմ մտքերի, հոգեւոր թռիչքների եւ համամարդկային ապրումների փայլուն արտայայտութիւն:

Ապրելով ու ստեղծագործելով հայրենի ափերից հեռու, այնուամենայնիւ մշտապէս Երուանդ Պապայեանի հետ է եղել մեր ժողովրդի հպարտութիւնը, հաւատն ու սէրը, որն էլ ուժ ու եռանդ է տուել նրան իրագործելու նորանոր խիզախումներ, անձնուրաց նուիրումով նպաստելով սփիւռքի հայապահպանմանն ու յարատեւմանը:

Այո՛, կարդալով «Պէտք չէ մոռցուին» խորագրով գիրքը, մէկ անգամ եւս համոզւում ես, որ հայ ինքնութիւնը պահպանելու միակ ճամբան մեր ազգային արժէքներին տէր կանգնելն է: Չէ որ երբ արեանդ մէջ անվերջ լսում ես քեզ յուշող եւ քեզ հունի մէջ պահող նախնիներիդ ձայնը, համոզւում ես, որ քեզ պարտութիւն չի սպասւում:

Թանկագին Երուանդ Պապայեանը որպէս սփիւռքահայութեան նահապետ, գիտակից զոհաբերութեամբ ապրած իր կեանքի օրինակով դարձել է եւ կը մնայ լեգենդ գալիք սերունդների համար:

Երուանդ Պապայեանին ճանաչելու հպարտութիւնը ես ունեցել եմ դեռեւս 6-7 տարեկան հասակից, երբ որպէս փոքրիկ ասմունքող հանդէս էի գալիս իմ հայրական օճախում կազմակերպւող ժողովներին եւ ճաշկերոյթներին, որտեղ վայելում էինք նաեւ սիրելի Երուանդ Պապայեանի պատուարժան ներկայութիւնը: Եւ այսօր, հանդիսանալով Լոս Անճելոսի Անթապցիների մշակութային միութեան վարչութեան անդամ, հօրս օրինակով շարունակում եմ տածել նոյն սէրն ու յարգանքը այս մեծ մարդու հանդէպ:

Այս պահին, 75 տարիների վաստակով ծանրաբեռնուած մեծարգոյ Երուանդ Պապայեանին, Այնթապցիների Մշակութային Միութեան պատուոյ նախագահին, իրենց շնորհաւորութիւններն են յղում միութեան վարչութեան անդամները, նրա մեծարգոյ նախագահ Աւ. Դեմիրճեանը մաղթելով կեանքին ու գործին յարատեւութիւն եւ անհուն առողջութիւն:

Շատ սիրելի Պրն. Պապայեան,

Թոյլ տուէք որդիաբար գրկել իմ երակներում հոսող արիւնի ջերմութեամբ համբուրել ձեզ ի երախտիք ձեր կրթական, հասարակական, ազգանուէր սուրբ գործունէութեան:

Այո՛, գիտակից ընծայաբերութիւններն են, որ մարդուս կեանքը պսակում են իմացեալ անմահութեամբ:

Անկասկած «Պէտք չէ մոռցուին» խորագրով գիրքը կը դառնայ պատգամ մեր սերունդների համար եւ ինչպէս բանաստծուհին է ասում.

Պատմութեան երթում անդուլ, հանապազ,՛
Առաջինների շարքում քայլելով,
Պատմութեան հանդէպ երեսդ միշտ պարզ,
Քո ողջ էութեամբ նորին փարուելով,
Քո մաքառելով,
Քո հաւատալով,
Քո արժէքներով ու քո անցեալով
Դու իմ ժողովուրդ,
Դու ապրել ես, կա՛ս, այսպէ՛ս ապրելով:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**

**«Մասիս» Շաբաթաթերթին**

**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**

**massis2@earthlink.net**

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

# «ԻՆՁ ՀԱՄԱՐ ՖԱՆՏԱՍՏԻԿ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄ ԷՐ ԻՄԱՆԱԼ, ՈՐ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՄԷՋ ՀԱՅ ՆԱԽՆԻՆԵՐ ԿԱՆ»

ՍՈՆԱ ԱԽԱԳԵԱՆ
Hetq.am

*Լիզ Ջաթըրի երազանքը Հնդկաստանի հայ համայնքի բոլոր ծնունդները, ամուսնութիւններն ու մահերը արձանագրելն է*

Լիզ Ջաթըրի (Liz Chater)՝ վերջին 3 դարերի ընթացքում Հնդկաստանի հետ առնչութիւն ունեցած հայերի տուեալների բազայում աւելի քան 10.000 անձ եւ մօտ 3.000 ընտանիք կայ: Լիզ Ջաթըրը հետազօտում է ընտանիքների պատմութիւնները:

Նա մասնագիտացած է Հնդկաստանի եւ Հեռաւոր Արեւելքի հայերի պատմութեան ուսումնասիրութեան մէջ: Լիզի խօսքով՝ իր կայքը (www.chater-genealogy.com), որը նուիրուած է 1600-1950 թթ. Հնդկաստանում հայ ընտանիքների պատմութեանը, լրացնում է պատմութեան այդ հատուածում եղած բացը:

Լիզ Ջաթըրը ծնուել է Անգլիայում, որտեղ եւ ապրում է այժմ: Նրա հետաքրքրութիւնը իր ընտանիքի արմատները փնտռելն է՝ առանց որեւէ բան իմանալու դրա ծագման մասին: Լիզի խօսքերով՝ ինքը չի ուսանել ընտանիքների պատմութեան հետազօտող դառնալու համար, եւ պարզապէս բարեյաջող պատահականութեամբ է 2000 թ.-ից սկսել զբաղուել դրանով:

Նա բաւականին շատ տեղեկատուութիւն ունէր իր մայրական կողմի մասին (ով վելսացի է), բայց շատ քիչ բան գիտէր հայրական կողմի մասին: Լիզի հայրը, ով մահացել է 1983-ին, երբեք չի խօսել իր ընտանիքի՝ Կալկաթայում ապրած ժամանակի մասին: Լիզի մայրն ի վիճակի էր պատասխանել Լիզի՝ հօր ընտանիքին վերաբերող հարցերի մի մասին միայն:

«Ես շարունակում էի տեղեկութիւններ փնտռել, եւ իմ փնտռտուքներն ինձ տարան Լոնտոնի բրիտանական գրադարան, որտեղ հսկայածաւալ տեղեկատուութիւն կայ գաղութային Հնդկաստանի մասին, ինչպէս նաեւ ծնունդների, ամուսնութիւնների եւ մահերի արձանագրութիւններ: Այնտեղ իմ առաջին այցելութեան ժամանակ բախտս բերեց. ես կարողացայ տեղեկութիւններ հայթայթել հայրական կողմից ընտանիքիս շատ անդամների մասին, որոնցից շատերն ունէին, ինչպես ես էի կարծում, «տարօրինակ անուններ» ինչպէս Արաթուն (Arathoon), Առաքել (Arakiel) եւ Մարտիրոս (Martyrose): Ես որոշ հարցումներ ուղարկեցի էլ. փոստի տոհմաբանական ցուցակին, եւ Նատիա Ռայթ (Nadia Wright) անունով մի հայ հետազօտող, ով մասնագիտացած է Սինկափուրում եւ Մալայզիայում ապրող հայերի պատմութեան ուսումնասիրութեան մէջ, ինձ ասաց, որ անունները հայկական էին: Սա ինձ համար այնպիսի՜ ֆանտաստիկ բացայայտում էր, եւ առաջին անգամն էր, որ իմացայ, որ գերդաստանիս մէջ հայ նախնիներ կան»,- «Հետքին» գրում է Լիզ Ջաթըրը:

Իր կայքում նա Ջաթըր անուան ծագման մի քանի հնարաւոր բացատրութիւն է բերում: Տարբերակներից մէկի համաձայն՝ ազգանունը կարող էր ծագել Աստուածատուրեան (Adsvazaturian) հայկական բառից:


Լիզ Ջաթըր

2005 թ. Լիզի հետ կապուեց իր անյայտ ազգականներից մէկը, ով ուզում էր տեղեկութիւններ ստանալ իրենց ընտանիքի մասին:

«Ինչն աւելի կարեւոր է, նա ինձ հնարաւորութիւն տուեց առաջին անգամ տեսնելու Ջաթըր ընտանիքի Աստուածաշունչը, որը թուագրւում է 1831 թ.-ով եւ պարունակում իմ բոլոր նախնիների անունները: Դա մի աննկարագրելի պահ էր: Նախ, երբ մենք հանդիպեցինք, իրար մէջ տեսանք մեր ծնողների նմանութիւնը: Երկրորդ՝ ես կարողացայ տեսնել այդ հին Աստուածաշունչը, որն իր կեանքում այնքա՜ն մղոններ է անցել: Դրանից յետոյ մենք մշտապէս կապի մէջ ենք եւ տարուայ ընթացքում հաւաքւում ենք ընտանեկան տարբեր առիթներով»,- իր կայքում գրում է Լիզը:

«Իմ հայկական ժառանգութիւնը բացայայտելուց յետոյ ես շատ ջանք թափեցի, որպէսզի աւելի շատ տեղեկատուութիւն գտնեմ յատկապէս Հնդկաստանի հայերի մասին»,- «Հետքին» գրում է նա:

Լիզի խօսքերով՝ Հնդկաստանի շատ հայ ընտանիքներ իրար հետ ազգակցական կապեր ունեն: 19-րդ դարում եւ 20-րդ դարասկզբին անսովոր բան չէր, երբ հօրեղբօր, քեռու, հօրաքրոջ կամ մօրաքրոջ երեխաներն ամուսնանում էին իրար հետ:

Ուստի, երբ Լիզը աշխատում է մի ընտանիքի պատմութեան վրայ, յաճախ լուծում է մէկ այլ ընտանիքի խնդիր եւս: Նրա ուսումնասիրութիւնը մեծ մասամբ ընդգրկում է Հայոց ցեղասպանութեանը նախորդող ժամանակաշրջանը՝ 17-րդ դարի եւ 20-րդ դարասկզբի միջեւ ընկած ժամանակահատուածը:

Քանի որ Լիզ Ջաթըրը շատ տեղեկութիւններ է հաւաքել, շատերը նրան խնդրում են իրենց հայ ընտանիքների հետ կապուած հարցումներին պատասխանել: Իրենց հերթին այդ մարդիկ էլ սիրով Լիզին են ներկայացնում մանրամասներ սեփական ընտանիքների պատմութիւնից:

Յաճախ է պատահում, որ Լիզը նրանց ունեցած աղքատ տեղեկատուութիւնը վերածում է շատ աւելի մեծ պատկերի՝ աւելի մեծ ընտանիքի, քան նրանք կարծում էին, թէ ունեն:

«Այն մարդը, ում թերեւս ամէնից շատ եմ օգնել, միջազգայնօրէն ճանաչուած նկարիչ Դաւիթ Արաթունն է (David Arathoon): Նա Թորոնթոյից է, բայց ծագումով Կալկաթայից է: Հնդկաստանում նրա հայ ընտանիքը տեղի հայկական եկեղեցու հետ կապ է ունեցել գրեթէ այնքան ժամանակ, որքան եկեղեցին կանգուն է: Նրա տոհմածառը ոչ թէ պարզապէս ընդլայնուեց, այլ պայթեց այն նոր տեղեկատուութիւնից, որ ներկայացրել եմ»,- ասում է Լիզը:

Նա «Հայկական գերեզմանները Հնդկաստանում» լուսանկարչական նախագիծն է իրականացնում: Լիզի կայքում ներկայացուած են Հնդկաստանում հայկական գերեզմանների նկարներ: Այս գերեզմաններից շատերը երկլեզուեան՝ հայերէն եւ անգլերէն, արձանագրութիւններ ունեն:

Հայկական գերեզմանների մի քանի հարիւր լուսանկար էլ, որոնց արձանագրութիւնները միայն հայերէն են, Լիզը դեռ չի կարողացել տեղադրել իր կայքում, քանի որ հայերէնին չի տիրապետում:

Այսպիսով, նա ամբողջովին կախուած է հայ ընտանիքների պատմութեամբ զբաղուող այլ էնտուզիաստներից, ովքեր իրեն կ'օգնեն վերծանել արձանագրութիւնները: Նա Հնդկաստանի տարբեր վայրերում գտնուող գերեզմանների մօտ 3.000 լուսանկար ունի:

«Ինձ համար իւրաքանչիւր գերեզմանատուն եւ տապանաքարեր ունեցող եկեղեցու բակ գրադարան է, եւ իւրաքանչիւր գերեզմանոց գիրք է: Ես անհատների եւ նրանց ընտանիքների մասին այնքա՜ն արժէքաւոր տեղեկատուութիւն եմ կարողանում քաղել տարբեր տապանաքարերից: Այդ է պատճառը, որ ամբողջովին նուիրուած եմ եւ չափազանց շատ եմ ցանկանում լուսանկարել հնդկահայկական գերեզմաններ, քանի դեռ դրանք այնքան չեն ենթարկուել եղանակային պայմաններին, որ այլեւս տեսանելի չեն: Երբ դա տեղի է ունենում, դու կամաց-կամաց կորցնում ես պատմութիւնը, եւ պէտք չէ, որ շատ սերունդներ անցնեն, որ այդ գերեզմանների մասին այլեւս ոչ ոք չյիշի՝ այն տեսանկիւնից, թէ ովքեր են այնտեղ ամփոփուած: Հնդկաստանի հայկական գերեզմանների մասին չափազանց լաւ են հոգ տանում, սակայն մայր բնութեանը կանգնեցնել հնարաւոր չէ»,- ասում է Լիզ Ջաթըրը:

Անդրադառնալով այն դժուարութիւններին, որոնց ամէնից յաճախ հանդիպում է իր աշխատանքում՝ Լիզ Ջաթըրն ասաց, որ իր համար ամենամեծ խոչընդոտը կարգին հետազօտութիւններ անելու համար անհրաժեշտ փողի բացակայութիւնն է:

Իր կայքում Լիզն այցելուներին խնդրում է նուիրատուութիւններ անել կայքը պահելու համար: Բայց, իր խօսքերով, յաջողութիւն կարելի է համարել, եթէ տարուայ մէջ 2 համեստ նուիրատուութիւն արուի: «Իւրաքանչիւր Դեկտեմբերի վերջին, երբ պէտք է երկարացնեմ պայմանագիրը, միշտ անհանգստանում եմ, որ չեմ կարողանայ եւս մէկ տարով երկարացնել այն»,- գրում է նա:

Խօսելով իր մասնագիտական ծրագրերի մասին՝ Լիզն ասաց, որ երազում է իր սիրողական եւ զուտ էնտուզիազմի վրայ հիմնուած հետազօտութիւնները կարիերայի վերածել:

Ի վերջոյ, նա ցանկանում է, եկեղեցական արձանագրութիւնների հիման վրայ, գրանցել Հնդկաստանի հայ համայնքի բոլոր ծնունդները, ամուսնութիւններն ու մահերը: Բայց քանի որ հին գրանցամատեանները գրուած են միայն գրաբարով, անգամ եթէ նա կարողանայ պատճէնել դրանք, յետոյ պէտք է կարողանայ գտնել որեւէ մէկի, ով կը ցանկանայ թարգմանել արձանագրութիւնները:

Լիզ Ջաթըրն ասաց, որ ընտանիքների պատմութեան ուսումնասիրութիւնն ամէնից արագ տարածուող զբաղմունքներից է Անգլիայում:

«Թէ ինչպէս իմ ընտանիքը յայտնուեց Հնդկաստանում, դեռեւս գաղտնիք է ինձ համար»,- գրում է նա:

### Ո՞վ է 20-րդ դարի ամէնից թերագնահատուած հնդկահայը

Լիզ Ջաթըրը տեղեկացրեց, որ այժմ Հնդկաստանում իսկապէս շատ փոքրաթիւ հայեր են ապրում: Կալկաթայի համայնքում 200-ից էլ քիչ հայ կայ: Այլ վայրերից, որտեղ


Քաչիկ Փոլ Ջաթըր

մի ժամանակ մեծ ու տնտեսապէս ուժեղ համայնք կար, ինչպէս, օրինակ, Ջեննայում (Մադրաս), հայերն ամբողջովին անհետացել են:

Սուրաթի, Մումբայի (Բոմբէյ) գործունեայ հայ վաճառականներից հեռաւոր յիշողութիւններ են մնացել: Սակայն գաղութատիրութեան ժամանակ «Իսթ Ինդիա Քամփընին» հայերին աշխատանքի էր ընդունում հեղինակաւոր ու կարեւոր պաշտօններում, քանի որ հայերը վստահելի ու նուիրուած էին:

«Հայերն անգլիականացնում էին իրենց անունները: Ուստի, նրանք հեշտութեամբ ինտեգրուեցին բրիտանական գաղութի ապրելակերպին: Այդպիսի օրինակ է սըր Քաչիկ Փոլ Ջաթըրի (Catchick Paul Chater) հայրը: Ծագումով լինելով Աստուածատուր Պօղոս Աստուածատուր (Astwachatoor Pogos Astwachatoor)՝ նա աշխատում էր Բենգալի կառավարութեան համար եւ յայտնի էր որպէս Ջաթըր Փոլ Ջաթըր (Chater Paul Chater): Որքանով ինձ յայտնի է, Հնդկաստանի հայերը միշտ էլ շատ են ջանացել ինտեգրուել իրենց շրջապատին: Տեղեակ եմ, որ Կալկաթայի հայկական վարժարանի ներկայիս հայ աշակերտները սովորում են բենգալերէնի տեղական բարբառները, ինչպէս նաեւ անգլերէն ու հայե-

Շար.ը էջ 17

# ՄԻՋԻՆՔ՝ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԷՋ

Ուրբաթ, 5 Մարտ, 2010 երեկոյեան ժամը 7-ին մեծ պահոց շրջանի Միջինքին առթիւ, եկեղեցկան յատուկ արարողութիւն տեղի ունեցաւ Լոս Անճելըսի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, բարեխնամ Առաջնորդ Արեւմտեան Թեմին:

Արարողութեան կը մասնակցէին Տ. Արշակ Ա. Քհնյ. Խաչատուրեան եւ Տ. Նարեկ Ա. Քհնյ. Մատարեան:

ԺԲ. դարուն յօրինուած Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի, Ս. Գրիգոր Նարեկացի Վարդապետի աղօթքներուն մասնակցեցան Ս. Յակոբ եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի ամբողջական կազմը, Սարկաւագներու եւ Կիսա-սարկաւագներու, դպիրներու եւ դպրաց դասի, ինչպէս նաեւ հաւատացեալներու բազմութիւն մը:

Հաւատացեալները ի ձեռին ունենալով պատրաստուած սոյն արարողութեանց հայերէն եւ անգլերէն տառադարձութեամբ եւ երաժշտական նօթագրութեամբ պատրաստուած յատուկ գիրքեր, հեշտութեամբ կարողացան հետեւիլ Առաքելական եկեղեցւոյս սրբազան արարողութեանց:

Վերոյիշեալ արարողութեանց վերջաւորութեան տեղի ունեցաւ նորընտրեալ Ծխական Խորհուրդի անդամ-անդամուհիներուն ուխտառութեան արարողութիւնը: Փետրուար ամսուան վերջին Կիրակիին, հերթական ժողովին բարեշնորհ տք. Սարգիս Սրկ. Մեսրոպեանը ընտրուած էր իբրեւ ատենապետ Ծխական Խորհուրդին իր լիակատար վարչական կազմով: Թեմական կանոններուն համաձայն Ծխական Խորհուրդի պաշտօնական հաստատումը կը կատարուի Թեմական առաջնորդ սրբազան հօր կողմէ:

Արդարեւ սրբազան հայրը իր օրհնութիւնները բաշխեց եւ իր հայրական պատգամով հաստատեց Ծխական Խորհուրդի նորընտիր անդամներն ու անդամուհին, միաժամանակ գնահատելով անոնց ցարդ տարած ու տանելիք աշխատանքները:

Նոյնպէս ջատագովեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւին եւ անոր շուրջ հաւաքուած կառոյցներուն աշխատանքները, վեր առաւ եկեղեցւոյ նիւթաբարոյական զոհաբերու-թիւնները եւ ջերմապէս ողջունեց ներկայ գտնուող հաւատացեալներու ներկայութիւնը:

Ապա Յովնան սրբազան անդրադառնալով առաջնորդարանիստ նորակառոյց տաճարի շինարարական աշխատանքներուն, յայտնեց թէ այս տարուան Յունիսին տաճարի կառուցումը աւարտած կ՚ըլլայ, իսկ Սեպտեմբերին ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետին՝ պիտի օծուի նորակառոյց Մայր Տաճարը::

Իր խօսքի աւարտին, առաջնորդ սրբազան հայրը Ծխական Խորհուրդի իւրաքանչիւր անդամի եւ նոյնիսկ ներկայ գտնուող հաւատացեալներուն ''Armenia...A Homeland discovered" տեսաերիզէն մէկական օրինակներ նուիրեց:

Մեծ Պահոց յատուկ հոգեպարար արարողութիւնէն ետք, բոլոր ներկաները ամէն տարուայ նման, եկեղեցւոյ Սուրբ Խորանի Տիկնանց միութեան կողմէ հիւրասիրուեցան եկեղեցւոյ շրջափակի «Տիւլկէրեան» սրահին մէջ:

Ընթրիքի պաշտօնական բաժնին յանուն Ծխական Խորհուրդին ատենապետ տք. Սարգիս սարկա-

Շար.ը էջ 19



# ԻՐԱՆԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ ՓԱՌԱՇՈՒՔ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Ծ.Խ. »Մասիս« ջերմօրէն կ՛ողջունէ Իրանահայ Ազգային-Մշակութային Միութեան 30-ամեայ տարեդարձը, յուսալով որ Իրանահայ այդ բազմանդամ միութիւնը կը շարունակէ իր հայրենանուէր եւ մշակութային աշխատանքները, ծառայելով մեր ժողովուրդին, ի մասնաւորի Իրանահայ համայնքին:

Մարտի 5ին Թեհրանի Հայոց հասարակական միութեան (Հայ ակումբ) սրահում հանդիսութեամբ նշուեց Իրանահայ ազգային եւ մշակութային միութեան՝ Ի.Ա.Մ.Մ.ի 30-ամեայ յոբելեանը: Բանախօսական-գեղարուեստական ծրագրով զուգորդուած հանդիսութեան բացումը կատարուեց Իրանի պետական հիմնով եւ Տէրունական աղօթքով: Ապա բեմ հրաւիրուեց Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ Արք. Սարգսեանը՝ ընթերցելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսների առանձին յղած կոնդակները՝ միութեան 30-ամեակի առիթով: Ծրագրի շարունակութեամբ միութեան նախագահ դոկտ. Անդրանիկ Սիմոնեանը հակիրճ բացատրութիւններ փոխանցեց 30-ամեայ անցեալի եւ ներկայ կարգավիճակի մասին, որից յետոյ ցուցադրուեցին երկու առանձին տեսաժապաւէններ եւ սլայդներ, մէկը՝ անցեալի, միւսը՝ ներկայի աշխատանքների վերաբերեալ: Ծրագրի ընթացքում մերթընդմերթ ընթերցւում էին յղուած ուղերձները:

Ծրագրի ընթացքում հրաւիրուեցին արտայայտուելու Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան նախարարութեան Կրօնական փոքրամասնութիւնների գրասենեակի պատասխանատու Թաղաւին ու Իրանում Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Գրիգոր Առաքելեանը: Ծրագրի գեղարուեստական բաժնում սաքսիֆոնի կատարումներով ելոյթ ունեցաւ երիտասարդ Արթիւր Աւասափեանը, երգով հանդէս եկաւ Օդեթ Մուրատեանը, որին դաշնամուրի կատարումով ընկերակցում էր Անդրէ Մուրատեանը, ամուսնացին Արման Ստեփանեանը, Անետ Աբգարեանը եւ Փինիկ Սիմոնեանը, դաշնամուրի կատարումով հանդէս եկաւ Նարեկ Աբրահամեանը, իսկ պարային կատարումներով ելոյթ ունեցաւ «Կակաչ» պարախումբը (գեղարուեստական ղեկավար՝ Արուս Սարգսեան, պարուսոյց՝ Արմինէ Աւագեան): Հանդիսութեան աւարտին եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ Արք. Սարգսեանը: Սրբազան Հայրը իր արտայայտութիւնների ընթացքում կարեւորութեամբ անդրադարձաւ սփիւռքեան պայմաններում հայկական միութիւնների դերին՝ հայապահպանման գործընթացում: Նա նշեց. «Միութիւններն արժեւորւում են այն չափով, որ իրենք իրենց ներդրումն են բերում հայ կեանքում, այսինքն՝ ոչ միայն հայապահպանման, այլեւ՝ հայակերտման, ազգակերտման եւ ազգանուէր գործունէութեամբ»: Նշենք, որ ծրագրին ներկայ էին՝ Թեհրանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի ու Թեմական խորհրդի ատենապետերը, Իրանի ներքին գործոց նախարարութիւնից պրն. Մոհամմադզադէն եւ Թեհրանահայ մարզամշակութային միութիւնների ներկայացուցիչները:





Չափազանց կարևոր է թերթիկը հետ ուղարկել, քանի որ
դրանից կարող է կախված լինել յուրաքանչյուրիս ապագան:
2010 թվականի մարդահամարի թերթիկը լրացնելով և հետ ուղարկելով՝ մենք համայնքային ծրագրերի իրագործման հնարավորություն ենք ստեղծում: Մասնակցելով 2010 թվականի մարդահամարին, մենք կարող ենք ստանալ մեր մասնաբաժինը համայնքային բարելավման պետական ծրագրով նախատեսվող 400 միլիարդ դոլլարից: Ուրեմն լրացնենք և հետ ուղարկենք մարդահամարի թերթիկը: Ապագան մեր ձեռքերում է: Լեզվական աջակցության համար այցելե՛ք 2010census.gov
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻՆ՝
ՁևԱՎՈՐԵՆՔ ՄԵՐ ԿՅԱՆՔԻ ՅԱՆԿԱԼԻ ՈՐԱԿԸ:
United States
Census
2010
ԱՄՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ-2010
ԱՅՆ ՄԵՐ ՁԵՌՔՈՒՄ Է
Paid for by U.S. Census Bureau.

## ԶՈՒԳԱՀԵՌ ՄԸ ԱՀՄԷՏ ԱԼՔԱՆԻ ԵՒ ՎԱՐՉԱՊԵՏ ՌԵՋԷՓ ԹԱՅԻՊ ԷՐՏՈՂԱՆԻ ՄԻՋԵՒ

*Շարունակուած էջ 1-էն*

ջազգային հանրային կարծիքին:

Ներկայ համարով կ'անդրադառնանք թուրք քաղաքական մտածողութեան ներկայացուցիչ՝ Վարչապետ Ռեջէփ Թայիփ Էրտողանի մասին: Ան 17 Մարտ 2010-ին, Լոնտոնի մէջ ունեցաւ սպառնական յայտարարութիւն մը որ, ըլլայ՝ իր անժամանակ, անակնկալ եւ զարմանք պատճառող ատելավառ մոլուցքով, ըլլայ՝ իր սպառնական, այլ ցնցիչ լեզուագրութեամբ եւ քաղաքական մարդու ներհակ նկարագրով, վերահաստատեց 95 տարիներ առաջ, Իթթիհատի կողմէ, Ահմէտ Ալքանի բառերով, «հայ անմեղ ժողովուրդի դէմ՝ որուն յանձանքը հայ անունը կրելն էր եղած» կազմակերպած Ցեղասպանութեան հիմք ծառայող թուրք ազգային ցեղամոլական դրդապատճառներու առկայութիւնը, մինչեւ օրս:

Ժողովրդական առածը կ'ըսէ. ճշմարտութիւնը մանուկներէն առէք: Այդ ասացուածքին վրայ կ'աւելցնենք մերը՝ թէ, ճշմարտութիւնը կրնաք նաեւ առնել, ատելավառ չափահասներէն, որոնք ջղագար վիճակի մէջ կը բացայայտեն իրենց ներքին պահածոյ ճշմարտութիւնները, ինչպէս օրինակ՝ վարչապետ Ռեջէփ Թայիպ Էրտողանի ելոյթը Լոնտոնի մէջ: Ան կը բացայայտէ նոր Օսմացիութեան վտանգը, ինչպէս կը հաստատեն Եւրամիութեան բանբերներ: Բացատրուինք:

Որովհետեւ ԱՄՆի Գոնկրէսի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնախումբը թիւ 252 բանաձեւով, 22ի դէմ 23 քուէով ճանչցաւ եւ դատապարտեց հայ ժողովուրդի դէմ Իթթիհատի կողմէ գործադրուած Ցեղասպանութիւնը՝ ցեղամոլ Էրտողանի մէջ գրգռեց իր մէջ թաքնուած ցասում, ատելութիւն ու թշնամանք, հայութեան հանդէպ: Մինչդեռ, այդ նոյն երեւոյթը թուրք մտաւորականներ՝ Ահմէտ Ալքանի, Թաներ Աքչամի, Օրհան Փամուքի, Ֆաթիէ Չեթինի եւ անոնց նման հարիւրաւոր Ալքաններու, Աքչամներու, Ֆաթիէներու եւ հայազգի նահատակ՝ Պոլսոյ «Ակօս» թերթի խմբագիր Տինքի թուրք մտաւորական գործակից ընկերներու մօտ, յառաջացուց ընդվզում, ընդդէմ սուտի. բողոք՝ ընդդէմ ճշմարտութեան ուրացումի. հրաւէր՝ ինքնագիտակցութեան. պատգամ՝ Իթթիհատի պաշտպան մերօրեայ թուրք իշխանութիւններուն:

Էրտողան սրդողած, բարկացայթ, կորսնցուցած իր քաղաքագէտի լրջախոհութիւնն ու հաւասարակշռութիւնը, Լոնտոնի մէջ, աշխարհով մէկ մարդկութեան երեսն ի վեր յայտարարեց.. «Թուրքիոյ մէջ կ'ապրին 170 հազար հայեր, որոնց 100 հազարը անօրինական է եւ Թուրքիոյ քաղաքացիներ չեն, վաղը եթէ պէտք ըլլայ, կ'արտաքսենք զանոնք մեր երկրէն»: Եթէ ԱՄՆի յանձնախումբը, թէկուզ ամբողջ ԱՄՆ, ճանչնայ նման Շուէտի՝ մարդկութեան դէմ իրագործուած առաջին Ցեղասպանութիւնը, ինչո՞վ են մեղաւոր որպէս թէ 100 հազար հաշուող այն հայերը, որոնք անօրէն կերպով հաստատուած են ու կը գործեն Թուրքիոյ մէջ, թող որ, այդ ալ թուրք իշխանութիւններու գիտակցութեամբ ու թոյլտուութեամբ:

Կրնանք եւ կասկածիլ Նորին Վսեմութիւն Պրն. Վարչապետին մտային հաւասարակշռութեան մասին, Ուրբաթ 26 Մարտին Զանախքալայի մէջ ունեցած իր հրապարակային շնորհալից ճառին պատճառաւ: Ան յայտնեց, թէ «Օսմանեան կայսրութեան մէջ, հայերը բնաւ երբէք ցեղասպանութեան ենթարկուած չեն, ընդհակառակը՝ անոնք են որ բնաջնջեցին «թուրքերը»: Մեր զինեալները», կը շարունակէ վսեմափայլ վարչապետը, «ցեղասպանութիւն չեն գործեր: Մեր քաղաքակրթութիւնը սիրոյ, հանդուրժողութեան եւ եղբայրութեան քաղաքակրթութիւն է»: Պրն. Էրտողան աւարտած է իր ելոյթը ըսելով, թէ մեր (թուրք) մահմետականները ցեղասպանութիւն չեն գործեր...:

Կարիք չկայ աւելի տարածուելու Էրտողանի կամ բոլոր Էրտողաններու այս վերջին ժամանակներուն կատարած յայտարարութիւններուն վրայ Միայն կարելի է ցաւ յայտնել, որ մեր մէջ կը գտնուին տակաւին ղեկավար դիրքերու վրայ գտնուող շատերը, որոնք կը վստահին նման ատելավառ, ազգամոլ, պատմական իրողութիւնները ուրացող, սուտը ձիւթի նման ծամող թուրք իշխանութիւններուն: Շատ գրեցինք, շատ խօսեցանք: Ժողովրդական հաւաքներով, ցոյցերով, քայլարշաւներով եւ ուղերձներով մեր բողոքը, անվստահութիւնը, մեր ժողովուրդի կամքը, արտայայտեցինք մեր հայրենի իշխանութիւններուն որ չհաւատան թուրքին: Էրտողան երեւոյթը ամէն բան կը բացայայտէ. Այսօրուան դրութեամբ, անգամ եթէ Թուրքիան վաւերացնէ ժընեւի համաձայնագրերը, կը կարծուի՞ թէ դոյզն դէպքի մը պարագային իրեն համար դժուար պիտի ըլլայ չեղաշրջել ինչ որ կարելի դարձած է իրագործել տարիներու ընթացքին: Ապացոյցը մէջտեղ չէ՞, իր պատմական իմաստով. ժընեւի համաձայնագրերու խորհրդարանական վաւերացման սեմին ուրկէ՞ բուսաւ ժընեւի համաձայնագրերու ստորագրման հարցի հետ առնչութիւն չունեցող Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգաւորման Թուրքիոյ նախապայմանը, կարենալ վաւերացնելու համար Հայաստան-Թուրքիա բրոթոքոլները... Ըսինք, կրկնենք. Ի՞նչ կապ ունի Թուրքիոյ մէջ -թող որ ապօրէն կերպով նստած ու աշխատող - հայաստանցին, ԱՄՆի մէկ Տան յանձնաժողովին եւ Շուէտի ազգային ժողովին ընդունած Ցեղասպանութեան հետ, որ Պրն. Վարչապետը սպառնայ «վռնտել» երկրէն, 100 հազար հայեր...:

Թելադրելին՝ որպէս նոր մեկնակէտ՝ ընդունիլ Հայոց դէմ գործադրուած Ցեղասպանութեամբ Արեւմտահայոց կրած վնասներուն յատուցումը եւ բռնագրաւուած հողերուն վերադարձը անոնց իրաւատիրոջ հայ ժողովուրդին: Որեւէ այլ ընտրանք՝ պարզապէս պիտի նշանակէ վտանգել հայուն ինքնութիւնն ու հայրենիքը:

## «ԻՆՁ ՀԱՄԱՐ ՖԱՆՏԱՍՏԻԿ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԷՐ»

*Շարունակուած էջ 14-էն*

*ըէն»,- ասաց Լիզը:*

*Նրա խօսքերով՝ հայերի կուրիզը Կալկաթայում է, եւ հենց համապատասխանաբար Հայկական վարժարանում եւ Դաւիդեան օրիորդաց դպրոցում սովորող տղաներն ու աղջիկներն են, որ վառ են պահում կրակը օճախում: Սակայն թէ որքա՞ն երկար սա կը տեւի, որեւէ մէկին յայտնի չէ:*

*Անդրադառնալով այն հարցին, թէ արդեօք իր հետազօտութիւնների ընթացքում տեղեկութիւններ գտե՞լ է այնպիսի տաղանդաւոր ու նշանաւոր հնդկահայի մասին, ով բացարձակապէս յայտնի չէ Հայաստանում՝ Լիզ լում էր Բեքինգհեմյան պալատ ու թագաւորական այլ նստավայրեր եւ իր արձակուրդն էր անցկացնում Քընոթի դքսի ու դքսուհու հետ Հարաւային Ֆրանսայում:*

*1870-ականներին Փոլը գնում էր հողակտորներ, կառուցապատում եւ վարձով էր տալիս այդ տարածքները: Նրան Կալկաթայից միացել էր իր կրտսեր եղբայր Ճոզեֆը (Joseph), եւ նրանք համատեղ ձեռնարկութիւններ ունէին:*

*Փոլը նաեւ ներում էր տեսնում ձիարշաւի մէջ, եւ 1870-ականներին իր գործընկեր, բոմբեյցի Հորմուսջի Մոդիի (Hormusjee Mody) հետ ձիեր ձեռք բերեց:*



*Փոլ Չաթըրի «Մարմարէ դահլիճ» տունը (Հոնգկոնգ)*

*Չաթըրը պատասխանեց, որ սըր Քաչիկ Փոլ Չաթըրը (յայտնի՝ որպէս Փոլ) 20-րդ դարի հաւանաբար ամէնից թերագնահատուած հնդկահայն է:*

*Լիզը պատահաբար է գտել այս մարդուն Բրիտանական գրադարան իր այցելութիւններից մէկի ժամանակ, երբ հաւաքում ու գրանցում էր գրադարանում եղած ցանկացած Չաթըր անուն:*

*«Սըր Քաչիկ Փոլ Չաթըրի անունն ինձ համար մեծագոյն յայտնագործութիւն էր»,- նշեց Լիզը:*

*Քաչիկ Փոլ Չաթըրը ծնուել է Կալկաթայում 1846 թ.: Նրա ծնողները եկել էին Պաղտատի հայկական համայնքից: Փոլը, թէեւ մկրտուել էր Կալկաթայի Սբ. Նազարէթ հայկական եկեղեցում, չգնաց տեղի հայկական վարժարան, որը 1821 թ. հիմնադրուած ու կայացած հայկական կրթօճախ էր, այլ 1855-ին ընդունուեց Կալկաթայի La Martiniere տղաների դպրոցը: 1864 թ. Փոլ Չաթըրը Հոնգկոնգ ժամանեց՝ իր հետ ունենալով ընդամէնը մի փայտեայ սնտուկ, որի մէջ իրերն էր դրել: Այդ փայտեայ սնտուկը միշտ նրա տան կահոյքի մի մասն էր եւ այն կեանքի յիշեցումն ու խորհրդանիշը, որը նա թողել էր Կալկաթայում:*

*Փոլն աշխատանք գտաւ պանքում: Երկու տարուայ ընթացքում նա բաւականաչափ բան սովորեց՝ ինքնուրոյն որպէս պրոքըր աշխատելու համար: 1869-ին նա արդէն Հոնգկոնգի Կրիկետի ակումբի անդամ էր:*

*Էդինբուրգի դուքս, Նորին գերազանցութիւն Ալֆրեդի այցելութիւնից յետոյ սըր Փոլը թագաւորական ընտանիքի մտերիմ ընկերն ու վստահելի անձը դարձաւ: Նա պարբերաբար այցե-*

*Լիզի խօսքերով՝ փաստ է, որ Փոլը 60 տարուայ ընթացքում՝ 1866-1926-ին, բաց չի թողել Հոնգկոնգում անցկացուած եւ ոչ մի ձիարշաւ: Նա 34 տարի շարունակ եղել է Հոնգկոնգի հեծեալների ակումբի նախագահ եւ մինչ այսօր համարւում է այդ ակումբը երբեւէ ամէնից երկար նախագահած անձը:*

*1890 թ. Քաչիկ Փոլ Չաթըրը հող «խլեց» ծովից եւ 57 ակր յաւելեալ տարածք կառուցեց՝ իրականացնելով ծովից «խլացման» Պրայայի ծրագիրը: «Սա այն հողն է, որի վրայ այսօր կանգնած է Հոնգկոնգը»,- նշում է Լիզը:*

*1902-ին Փոլին Լոնտոնում պատուեցին ասպետութիւն կոչումով Հոնգկոնգ կղզու բարգաւաճման գործում ունեցած ներդրման համար: Նա կղզուն բերեց կայունութիւն, սոցիալական հեռանկարներ, աշխատանքով ապահովուեց մարդկանց, շինարարութիւն ծաւալեց: Նա մահացաւ 79 տարեկանում:*

*«Նա «Մարմարէ դահլիճ» կոչուող իր գեղեցիկ ու եզակի տունը, ինչպէս նաեւ ճենապակուց արուեստի անգին հաւաքածուն՝ յայտնի որպէս «Չաթըրի հաւաքածոյ», առատաձեռնօրէն թողեց Հոնգկոնգի կառավարութեանը՝ հաւանաբար յուսալով, որ նրանք տունը թանգարանի կը վերածեն: Նրանք դա չարեցին: Մի քանի եղբօրորդիներին շատ չռայլ ժառանգութիւն թողնելուց յետոյ՝ սըր Փոլ Չաթըրը, իր կեանքի մեծ մասը լինելով «գաղտնի» հայ, իրեն պարտաւորուած զգաց իր մնացած կալուածքները որպէս նուիրատուութիւն թողնել Սբ. Նազարէթ հայկական եկեղեցուն Կալկաթայում, որտեղ եւ սկսուել էր իր կեանքը»,- գրում է Լիզը:*

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ԱՐԹԻՒՐ ԱԲՐԱՀԱՄԸ ՊԱՐՏՈՒԵՑ



*Գերմանիան ներկայացնող հայազգի պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Արթուր Աբրահամը Super-Six սերիայի 2-րդ մրցամարտում պարտուեց ամերիկացի Անդրէ Դիրելին:*

*Տիթրոյիտում կայացած մենամարտը հանդիսատ ակսուեց: Չորրորդ ռաունդում Աբրահամը դիմեց ակտիւ գործողութիւնների, սակայն պատասխան հարուած ստացաւ եւ յայտնուեց նոկդաունում: Դիրելը, որն աւելի արագ էր գործում, 7-րդ ռաունդում վնասեց նաեւ Արթուրի հոնքը: Չնայած դրան, Արթուր Աբրահամը շարունակեց մարտը եւ քիչ էր մնում բեկում մտցնէր մրցապայքարում: Նա 10-րդ ռաունդում նոկաուտի ենթարկեց Դիրելին, սակայն մրցավարը դա գնահատեց որպէս սայթաքման արդիւնք: 11-րդում Արթուրի գրոհներից մէկի ժամանակ ամերիկացին արդէն իրօք սայթաքեց եւ ծնկի եկաւ: Այդ ժամանակ ազարտի մէջ մտած Աբրահամը հուժկու հարուած հասցրեց մրցակցի գլխին, որի արդիւնքում վերջինս կորցրեց հաւասարակշռութիւնը:*

*Դիրելի մարզիչը մտաւ ռինգ եւ սկսեց վիճել գլխաւոր մրցավարի հետ՝ պահանջելով որակազրկել Արթուր Աբրահամին: Այդպէս էլ եղաւ: Գլխաւոր մրցավարը որոշեց որակազրկել Արթուր Աբրահամին եւ յաղթանակը շնորհել Դիրելին:*

*Մրցամարտից յետոյ գերմանական ԱՐԴ հեռուստաընկերութեան լրագրողի այն հարցին, թէ այս ինչ էք անում, Արթուր Աբրահամը պատասխանել է. «Իսկ ինչ եմ անում որ: Ես բռնցքամարտիկ եմ: Հաշուի առէք, եթէ ես չհարուածեմ, ապա ինձ կը հարուածեն»:*

*Արթուր Աբրահամը համամիտ չէ, այն կարծիքներին, թէ ինքը միտումնաւոր է հարուածել Անդրէ Դիրելին: «Ես սկզբում որոշակի միաւորներով զիջում էի, սակայն վերջում իրավիճակի կառավարումն իմ ձեռքում էր:*

*Ակնյայտ էր, որ ամբողջ մենամարտի ընթացքում դատաւորները Ա. Դիրելի կողմից էին, դրա վառ վկայութիւնը իմ կողմից արուած նոքդաունը չգրանցելն էր: Ինչ վերաբերում է Ա. Դիրելին ուղղուած իմ վերջին հարուածին, ապա դա իներցիայով կատարուեց, այստեղ ոչ մի միտումնաւոր քայլ չկար»,-«Արմենպրես»-ի հետ զրոյցում ասաց Ա. Աբրահամը: Նա նշեց, որ պատրաստւում են բողոքարկել, որպէսզի մենամարտը համարուի ոչ ոքի: Հայազգի բռնցքամարտիկը նշեց, որ իրեն պարտուած չի համարում*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Ազգային ծառայութեան 75 ամեակին եւ «Պէտք Չէ Մոռցուին» գիրքիս հրատարակութեան նուիրուած Մարտ 7ին կայացած հանդիսութեան առիթով պարտք կը զգամ խորին շնորհակալութիւններս յայտնելու Արեւմտեան Ամերիկայի Հայոց Առաջնորդ Գեր. Յովնան Արք. Տէրտէրեանին հովանաւորութեան եւ խօսքին համար:*

*Շնորհակալութիւն Հ.Բ.Ը. Միութեան նախագահ Պերճ Սեդրակեանի շնորհաւորական նամակին եւ իր ու Կեդրոնական Վարչութեան կողմէ ինծի շնորհուած Նախագահական Պատուոյ Շքանշանին համար:*

*Շնորհակալութիւն Կլենտէյլի քաղաքապետ Ֆրանք Քուինթերօյի գնահատական խօսքին եւ յուշատախտակի համար:*

*Շնորհակալութիւն գլխաւոր խօսողներ Պրն. Սինան Սինանեանին, Տօքթ. Գէորգ Քէշիշեանին եւ Պրն. Վաչէ Սմերճեանին: Նաեւ սրտի խօսքով արտայայտուողներուն Տօքթ. Ծովինար Քէօշկերեանին, Տիկ. Թագուհի Արզումանեանին, (Հայ Այնթապցիներու Միութեան կողմէ) Տօքթ. Կապի Ասլանեանին, Տիկ. Կարինէ Տէր Գէորգեանին եւ Պրն. Յակոբ Մարտիրոսեանին, (ՌԱԿ Շրջ. Վրչ. անունով):*

*Շնորհակալութիւն ճարտար հանդիսավար Պրն. Բարսեղ Գարթալեանին:*

*Շնորհակալութիւն Թ.Մ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան շնորհաւորական նամակին համար:*

*Շնորհակալութիւն ՌԱԿի Արեւմտեան Շրջանային Վարչութեան յուշատախտակին համար:*

*Շնորհակալութիւն հանդիսութիւնը կազմակերպող Թէքէեան Մշակ. Միութեան Լոս Անճելըսի մասնաճիւղին եւ Հայ Այնթապցիներու Մշակութային Միութեան:*

*Շնորհակալութիւն բոլոր անոնց , նախկին աշակերտներ կամ բարեկամներ, որոնք հեռագրով, նամակներով, ծաղիկներով կամ այլապէս մասնակից եղան հանդիսութեան:*

*Երուանդ Պապայեան*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻՆ

*Տէր եւ Տիկ. Պարոյր եւ Արմենուհի Գրաճեաններ, իրենց բարեկամին՝ Պրն. Երուանդ Պապայեանին ի պատիւ կազմակերպուած մեծարանքի հանդիսութեան եւ նոր լոյս տեսած «Պէտք Չէ Մոռցուին» գիրքին առիթներով, հայ մամուլին, որպէս քաջալերանք, կը նուիրեն.*

| | |
|---|---|
| «Մասիս» շաբաթաթերթին | $100 |
| «Նոր Հայաստան» օրաթերթին | $100 |
| «Նոր Օր» շաբաթաթերթին | $100 |
| «Նոր Կեանք» շաբաթաթերթին | $100 |
| «Ասպարէզ» օրաթերթին | $100 |

## ՀՀ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ՄԵԿՆԱՐԿԸ

*Հայաստանի ֆուտբոլի 2010 թվականի ազգային առաջնութեան մեկնարկային փուլի կենտրոնական՝ «Միկա» Աշտարակ-«Բանանց» Երեւան, հանդիպումը, որն անցկացվել է «Միկա» մարզական համալիրում, ավարտվել է 4:0 հաշվով՝ հօգուտ Միկայի:*

*Խաղի 48-րդ րոպեին հաշիվը բացել է Նարեկ Բեգլարյանը՝ 1:0, այնուհետեւ խաղադաշտում միակողմանի խաղ է ծավալվել. 58-րդ րոպեին Ալեքսը խփել է երկրորդ գոլը՝ 2:0, իսկ 69-րդ րոպեին Էդնեյը հաշիվը դարձրել է 3:0, Գրիգալեւիչյուսը՝ 4:0:*

*Երեւանի «Կիլիկիան» սեփական հարկի տակ այս փուլում 3:1 հաշվով հաղթել է Կապանի «Գանձասարին»՝ չնայած խաղի հաշիվը բացել է հյուրերի հարձակվող Ավետիսյանը՝ 25-րդ րոպեին: Դաշտի տերերից գոլերը խփել են Մովսիսյանը՝ 48-րդ, Մնացականյանը՝ 82-րդ եւ Ղարաբաղցյանը՝ 87-րդ րոպեին:*

*Երեւանի «Փյունիկը» 3:0 հաշվով հաղթել է Գյումրիում «Շիրակին», իսկ Երեւանի «Ուլիսը» նույն 3:0 հաշվով Դիլիջանում՝ տեղի «Իմպուլսին»:*

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ Է ՏԱՐՈՒՄ ՀԱՅ ՖՈՒԹՊՈԼԻՍՏՆԵՐ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆՈՒՄ



*Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան աշխատանքներ է տանում արտասահմանեան ակումբներում ելոյթ ունեցող ֆուտբոլիստներին Հայաստանի տարբեր տարիքային հաւաքականներում ընդգրկելու համար:*

*Բանակցութիւններն ընթացքի մէջ են արգենտինական «Նյուելզ օլդ Բոյզ»-ի հարձակվող Խոակին Պողոսյանի հետ, ով, ամենայն հավանականութեամբ, իր վերջնական պատասխանը կտա հունիսին կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնութեան մեկնարկից առաջ, քանի որ դեռեւս հույս ունի հրավիրվել Ուրուգվայի ազգային հավաքական՝ այդ թիմի կազմում մասնակցելու ՀԱՀ-ում կայանալիք աշխարհի առաջնութեանը: Բացի այդ, ամենայն հավանականութեամբ, ՀՀ ընտրանու կազմում կսկսի ելույթ ունենալ դանիական «Ռանդերս»-ի հարձակվող Յուրա Մովսիսյանը: Վերջինս ունի որոշ խնդիրներ փաստաթղթերի հետ կապված, որոնք մոտ ապագայում կշտկվեն:*

*Առաջիկայում Հայաստանի երիտասարդական հավաքականում հնարավոր է փորձաշրջան անցնեն հոլանդական «Այաքս»-ի երիտասարդական թիմում ելույթ ունեցող Արագ Օզբիլիզը, իսպանական «Սեւիլիա»-ի խաղացող Ֆուրման Մելքոնյանը, էստոնական ակումբներից մեկում խաղացող Ալեն Ստեփանյանը եւ գերմանական «Ֆրայբուրգ»-ի սան հայազգի 17-ամյա ֆուտբոլիստ:*

## ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

*«Մասիս»ի հաւատաւոր ընթերցողներէն ՃՈՐՃ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ վերջերս վիրաբուժական գործողութեան մը ենթարկուելով այժմ տուն վերադարձած է եւ կը բոլորէ իր ապաքինման շրջանը: Շուտափոյթ ապաքինում կը մաղթենք իրեն:*

***

*ԾՈՎԻԿ ՔԷՕՐՕՂԼԵԱՆ վիրաբուժական յաջող գործողութեան մը ենթարկուելէ ետք այժմ տան մէջ կը բոլորէ իր կազդուրման շրջանը: Այս առթիւ Հ.Մ.Մ.ի Տիկնանց Մասնաճիւղի վարչութիւնը կատարեալ եւ արագ ապաքինում կը մաղթէ իր անդամուհիին:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ Տիար Յովհաննէս Հաննէսեանի («Շիրակ» հրատարակչատուն), Միութեանս գրադարանին կատարած 100 հայկական գիրքերու նուիրատուութեան համար:*


## ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Avenue
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով

Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

**REQUEST FOR PROPOSALS**
**RFP NO. 7530**
**INSURANCE BROKERAGE AND RISK MANAGEMENT CONSULTING SERVICES**

**The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in providing insurance brokerage and risk management consulting services. A copy of the RFP may be obtained beginning March 22, 2010 via www.hacla.org/ps or call (213) 252-5405 or 252-1832. Proposals will be accepted until 2:00 P.M., by April 23, 2010.**

4/1, 4/8/10
CNS-1820924#
MASSIS WEEKLY

# ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



ԳՐԻԳՈՐ ԳՈՒԶՈՒԵԱՆ

Հանգուցեալ ԳՐԻԳՈՐ ԳՈՒԶՈՒԵԱՆի մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Ապրիլ 11, 2010ին Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 E Colorado Blvd., յաւարտ Ս. Պատարագի:

Սգակիրներ՝
Այրին՝ Կիւլէն Գուզուեան
Դուստրը՝ Հուրիկ Գուզուեան
Դուստրը՝ Կարօ եւ Սիլվա Մսրլեան եւ զաւակները
Տղան՝ Յակոբ եւ Նայիրի Գուզուեան եւ զաւակները
Դուստրը՝ Վազգէն եւ Սեդա Խոտանեան եւ զաւակը
Քոյրը՝ Ալիս Յարութիւնեան եւ զաւակները
Եղբօր տիկինը՝ Մարիժան Գուզուեան եւ զաւակները
Եւ համայն Գուզուեան, Ղազարեան, Յարութիւնեան, Այն Մալըք, Մսրլեան, Խոտանեան, Մուրատեան ընտանիքներ եւ հարազատներ:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի ՀԿԲՄ Կեդրոնի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ 1060 N Allen Ave. Pasadena:

## ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԶԱՏԿԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Շարունակուած էջ 5-էն

համնելու:

Քրիստոսի յարութիւնը եղաւ հաստատումը եւ պսակումը իր խօսքերուն: Ան երկար չմնաց մահուան իշխանութեան ներքեւ: Երեք օրերը գերեզմանին մէջ՝ անհրաժեշտ էին, բայց նաեւ բաւարար՝ իրագործելու եւ հաստատելու համար իր կանխասացումը, հիմնուած մարգարէներու խօսքերուն վրայ. «Հարկ է որ Մեսիան շատ չարչարուի, դրուի գերեզմանի մէջ, բայց երեք օր վերջ ան յարութիւն պիտի առնէ» (Մտթ. 16,21): Տարտամ փափաք մը չէր այդ, ոչ ալ մարդկային յաւակնութիւն. ստուգութիւն մըն էր, հիմնուած՝ իր Հօր, Աստուծոյ խոստումին վրայ:

Քրիստոսի յարութիւնը է նաեւ մե՛ր յարութիւնը: Անոր յաղթանակը չարին եւ մեղքին վրայ՝ պէտք է ըլլայ նաեւ մե՛ր յաղթանակը: Ցոյսը մեր յաւիտենական կեանքին եւ երջանկութեան՝ հիմնուած իր խօսքերուն վրայ. «Ե՛ս եմ Յարութիւնը եւ Կեանքը. այն որ կը հաւատայ ինծի երբեք պիտի չմեռնի»: Ան քաջալերեց իր աշակերտները, եւ մեզ ալ նմանապէս, յարատեւելու հաւատքի պայքարին մէջ, որովհետեւ այն որ կը վստահի անոր պիտի չսայթաքի: Արդարեւ ըսաւ նաեւ. «Մի՛ վախնաք, ես ձեզի հետ եմ մինչեւ աշխարհի վերջը»:

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր, զատկական այս փառաւոր օրուայ ընթացքին, թոյլ տուէք որ յիշեցնեմ այս ճշմարտութիւնը. Աստուծոյ սէրը աւելի հզօր է քան մահը: Լեցնենք ուստի մեր սրտերն ու միտքերը այն անխախտ համոզումով թէ մեր կեանքը անիմաստ ու անհեթեթ գոյութիւն մը չէ, ոչ ալ մեր մահը՝ անարդար պատիժ մը: Կեանք եւ մահ պարգեւներն են Աստուծոյ, եւ պէտք է ծառայեն աւելի լաւ ճանչնալու սէրն ու բարութիւնը Աստուծոյ՝ հանդէպ մեզի, եւ փաստելու մեր սէրն ու երախտագիտութիւնը հանդէպ Աստուծոյ:

Յարութիւնը տօնն է ուրախութեան եւ լոյսի: Եկէք դիմաւորենք զայն ցնծութեան երգերով եւ գոհաբանական աղօթքներով եւ ողջունենք զիրար հրեշտակին յաղթական աւետիսով, որուն արձագանգեցին Առաքեալները. «ՏԷՐԸ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՒ»:

Այո. «ՃՇՄԱՐՏԱՊԷՍ ՅԱՐԵԱՒ»:

Մանուէլ Եպս. Պաքաջեան
Առաջնորդ Կաթողիկէ Հայոց

## ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՄԱՐԴՈՒ ՈԴԻՍԱԿԱՆԸ

Շարունակուած էջ 13-էն

պաւէնը, եթէ չսխալեմ կէս ժամից աւելի իրաւ ժապաւէն, որտեղ հեղինակի յուշերից ձեւաւորւած կուիներից, ջարդերից պատկերներ եւ հեղինակի կենդանի զրոյցն էր ցուցադրւում, տխուր եւ դառն դրւագներ, որոնք յուզում պատճառեցին հանդիսականներին խլելով արցունքի կաթիլներ: Նա բարձրօրէն գնահատեց արժանանալով ներկաների ծափ ողջոյններին:

Բեմ հրաւիրւեց ճարտ. Վարուժան Կիւրեղեանը, նախ շնորհակալութիւն յայտնեց ներկաներին իրենց մասնակցութեան համար, ապա իր խօսքն ուղղելով գրքի խմբագիրներին, հանդէսի դերակատարներին եւ արտայայտողներին խորին շնորհակալութիւն յայտնեց եւ սրտագինս գնահատեց բոլորին, նաեւ ներկայացրեց հեղինակ հօր նեղութիւններն ու տառապանքները, իրենց ընտանիքի դժւարութիւնների եւ կորուստների մասին, որոնց մասին գրքի յաւելւածում մանրամասն բերւած է: Վարուժանը մեր թեհրանահայ կեանքում յարգւած մի անձնաւորութիւն է իր կատարած նիւթական եւ բարոյական ծառայութիւններով, նա Իրանահայ Ազգային եւ Մշակութային Միութեան հիմնադիր անդամներից է եղել մինչեւ այժմ մնալով այդ միութեան պաշտպանն ու սատարողը: Հիմա էլ տարբեր բարեգործական կազմակերպութիւնների հիմնադիրներից լինելով օգտակար է լինում մեր հայրենիքին:

Հետաքրքիր եւ արժանի, մտածւած եւ կազմակերպւած հանդէս: Գրքերի բաշխում կատարւեց՝ նախապէս հրաւիրեալների անուններով մակագրւած եւ պատրաստւած: Բոլոր ներկաները գիրք ստացան:

Ծոխ հիւրասիրութիւն էր պատրաստւել:

Հանդիսականները թողեցին սրահը գոհ ու տպաւորւած:

## ՄԻՋԻՆՔ՝ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԷՋ

Շարունակուած էջ 15-էն

ւազ Մեսրոպեան շնորհակալութեան եւ երախտագիտութեան իր խօսքերէն ետք մեծապէս գնահատեց առաջնորդ սրբազան հօր հոգեւոր առաքելութիւնը եւ անոր կատարած դերը Թեմէն ներս:

Իր կարգին սրտի յատուկ խօսքերով եւ երախտագիտական զգացումներով ելոյթ ունեցաւ նաեւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արշակ քհնյ. Խաչատուրեան, շնորհակալութիւն յայտնեց առաջնորդ սրբազան հօր իր հայրական հոգատարութեան համար եւ բոլոր անոնց, որոնք սոյն երեկոյի բարեյաջողութեան սատարեցին իրենց անսակարկ նուիրումով Ս. Յակոբ Եկեղեցւոյ:

Յետ ընթրիքի, առաջնորդ սրբազան հօր նախագահութեամբ Ծխական Խորհուրդի կազմին հետ մտերմիկ ժողով մը տեղի ունեցաւ, որուն ընթացքին անգամ մը եւս գնահատուեցան առաջնորդ սրբազան հօր Ս. Յակոբ Եկեղեցւոյ 68րդ ամեակին առիթով Ղարաբաղէն բերուած եւ եկեղեցւոյս չորս կողմերը շրջափակին մէջ զետեղուած 6 խաչքարերու սրբագործութիւնը կատարելուն համար:

Այս առիթով յանուն Ս. Յակոբ Հայց. Առքլ. Եկեղեցւոյ, Բրշ. Տք. Սարգիս Սարկաւագ Մեսրոպեան իր ընտանիքի կողմէ երեք նմանօրինակ հսկայ խաչքարեր կը նուիրէ առաջնորդարանի Մայր Տաճարին, որոնցմէ մէկը պիտի զետեղուի Առաջնորդարանի ճամբարի մուտքին:

Երեկոն գոհաբանութեան աղօթքով փակուեցաւ:

## ՄԵՐՏԻՆԵԱՆ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Շարունակուած էջ 8-էն

գիչ Գագիկ Պատալեանի:

Ընթրիքէն ետք տօքթ. Միհրան Աղպապեան ներկայացուց օրուան պատգամաբերը՝ տօքթ. Յարութիւն Արմէնեանը:

Շրջանաւարտ՝ Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն, ապա եղած է դասախօս՝ նոյն համալսարանին մէջ: Ստացած է Լիբանանի Նախագահական Մայրիներու շքանշանը: Աւելի ուշ եղած էՊալթիմորի Ճան Հաբքինզ բժշկական համալսարանի դասախօսներէն եւ արժանացած է Golden Apple մրցանակին, որպէս լաւագոյն դասախօս:

Հայաստանի մէջ նախ մշակած է հանրային առողջապահութեան ծրագիր մը՝ բժշկութեան ճիւղէն ներս, ապա մաս կազմելով Հայաստանի Ամերիկեան Համալսարանի անձնակազմին, դարձած է դասախօս, տնօրէն եւ նախագահ: 2001ին արժանացած է Մովսէս Խորենացի շքանշանին: Այժմ հաստատուած է Լոս Անճելըս եւ կը դասախօսէ UCLA համալսարանին մէջ:

Տօքթ. Արմէնեան իր խօսքին մէջ նախ անդրադարձաւ Սփիւռքի մէջ Հայկական ինքնութիւնն ու հայ ոգին պահելու մասին, եւ շեշտեց որ շատ հեշտ է ըլլալ թէ Հայ եւ թէ Ամերիկայից կամ այլ երկրացի եթէ լաւապէս ճանչնանք մեր հարուստ մշակոյթը: Ապա խօսելէ առաջ Հայ դպրոցներուն, ի մասնաւորի Մերտինեան վարժարանի առաքելութեան մասին, ան հարց տուաւ՝ «Ի՞նչն է որ մեր երեխաներն ու թոռները պիտի ժառանգեն մեզմէ: Ես մտահոգութիւն չունիմ, որ անոնք նիւթական բաւական բարեկեցիկ կեանք պիտի ունենան: Սակայն անոնց ապագան որչափով պիտի հաղորդուի մեր ունեցած անցեալի ու ներկայի արժէնքներով ու մանաւանդ հայ ժողովուրդի այն տեսլականով, որ մեր նախնիները փոխանցեցին մեզի»: Ահա հոս կը գտնուի հայ դպրոցին առաքելութիւնը, «եկէ՛ք չզլանանք կատարելու այն զոհողութիւնները, որ մեզմէ կը պահանջուի հայ դպրոցին համար»:

Վերջին խօսք առնողը եղաւ վարժարանիս տնօրէնը՝ պրն. Յովսէփ Ինճէճիքեանը, որ ներկայացուց դպրոցին ուսումնական յաջողութիւնները, եւ անոր յարատեւ վերելքին ի խնդիր տարուած աշխատանքները, ապա ներկայացուց օրուան մեծարեալներէն առաջինը՝ Տիկ. Մակի Թոփալեանը, որ 25 տարիներէ ի վեր կը ծառայէ վարժարանիս Նախամանկապարտէզի բաժնին մէջ որպէս վարիչ տնօրէնուհի եւ ուսուցիչ: Բեմ հրաւիրելով տիկ. Թոփալեանը, տնօրէնն ու հոգաբարձութեան ատենապետը անոր յանձնեցին գնահատագիր-յուշատախտակ մը եւ ոսկեայ ապարանջայ մը:

Յաջորդ մեծարեալները վարժարանիս երաժշտական մարզին մէջ կամաւոր կերպով ծառայող 3 տիկիններ էին՝ տիկ. Լուսինա Ապղաղեան-Հապպըրտ, տիկ. Ֆրանսիս Տէմիրճեան եւ տիկ. Հուրիկ Ապտիլեան. զանոնք ներկայացուց Տիկնանց Օժանդակ Մարմնէն տիկ. Ռիթա Մէնէշեանը, ապա յաջորդաբար անոնք ալ բեմ բարձրանալով ստացան իրենց գնահատագիր-յուշատախտակները:

Վարֆքը կատար բոլոր մեծարեալներուն. թէող անոնց ծառայասիրութիւնը ըլլայ վարակիչ, եւ ազգանուէր գործընթացը շարունակողներուէն շարքը ըլլայ անծայր:

Երեկոն վերջ գտաւ Վեր. Վահան Թութիկեանի փակման խօսքով եւ օրհնութեան աղօթքով:

www.massisweekly.com
Updated every Friday

# *«ԿԱՆՔ, ՊԻՏԻ ԼԻՆԵՆՔ ՈՒ ԴԵՌ ՇԱՏԱՆԱՆՔ»*

**ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ**

**ՀԲԸՄ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

## ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

**Պատուոյ Նախագահութեամբ**

**Տէր Եւ Տիկին Գառնիկ Եւ Անժել Գարայեաններու**

**Բանախօս՝ Տոքթ. Գէորգ Քէշիշեան**

**ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 10, 2010 ժամը 6:30-ին**

**ՀԲԸ Միութեան Փասատինայի Համալիրին մէջ**
**2495 E. Mountain Street**
**Pasadena, CA 91104**

**Մասնաւոր Արարողութիւն Խաչքար Յուշարձանի Առջեւ**

**Գեղարուեստական Պատշաճ Յայտագիր**

**ՀԲԸՄ Վաչէ և Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարանի Աշակերտներու**

**Ձեռարուեստի Ցուցահանդէս**

***«Նոր Սերունդ - Նոր Հորիզոն»***

**Հիւրասիրութիւն հանդիսութենէն ետք**

## Մուտքը Ազատ